




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՌԳԵՅԻՆ, ԻՆՆՍՏԻԿՆԸ, ԳՐԱԳԻՏԱԿՆԸ
ԵՒ ԳԵՂԱՅԻՆԿՆԸ


ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՍԻՆՍԵՆՑ



ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1871.



ՎԵՑԵՐՈՐԴ ՏՄԵԻ
ԹԻՒ 8.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՕԳՈՍՏՈՍ 31.
1871.

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Ս Ա Մ Ա Ր Ա Յ Ի Ն ^(*)

ՕՐԻՆԱԿԱՆԻ հարցումը պատեհ առիթ մ'էր Յիսուսի Քրիստոսի համար՝ հռչակել մարդասիրութեան մեծ սկզբունքը և վսեմ ճշմարտութիւնը: Իայց ինչքան սքանչելի է երկնաւոր Վարդապետի ընտրած եղանակը սոյն պարագայիս մէջ: Աս կարող էր համառօտ խօսքով պատասխանել Օրինականին, բայց չը կամեցաւ այսպէս առնել, այլ սկսաւ պատմական օրինակ մի յառաջ բերել: Եւ սոյն պատմութեան համար յատկապէս օրինակ բերաւ մի Հրէայ և մի Սամարացի, և ոչ թէ ուրիշ երկու տարբեր աղբերէ երկու տարբեր անձինք: Հը-

րէան օրինակ բերաւ, որովհետեւ Հրէի հետ կը խօսէր. Սամարացին օրինակ բերաւ, որովհետեւ Հրէից և Սամարացւոյ մէջ սերնդական անհաշտ ատելութիւն կար, և բոլորովն ատուած պաշտութեան մէջ եւս հակաբաժնիք էին, սերնդական ատելութիւնն օր աւուր աւելի կը զայրանար Հետեւապէս, Յիսուս Քրիստոս ոչ թէ լոկ երկու օտարազգիներ օրինակ բերաւ, այլ երկու հակառակորդներ, երկու անհաշտ թշնամիներ: Իայց այսչափը չէ միայն: Յիսուս Քրիստոս Սամարացւոյ և Հրէի վարկենական պատմութեան մէջ կարող էր Հրէան բարերար ներկայացնել և Սամարացին

(*) Հարունակութիւն և վերջ, տես թիւ 6.

բարերարեալ, բայց ընդհակառակն
կը տեսնենք: Յիսուս, Սամարացին
բարերար ներկայացնելով, պաշարեց
զՀրէան, որպէս զի չը համարձակի Սա-
մարացւոյն հետ ունեցած յարաբե-
րութիւնը ինքնիշխանաբար կտրել,
այլ կապուի իրեն բարերարող օտա-
րին և թշնամւոյն հետ, կամ ճանաչե-
լնա որպէս ընկեր և կամ չը ճանաչե-
լով՝ խոստովանի իւր ամսթալի տպե-
րախառութիւնը:

Այսքանն եւս բաւական էր մար-
դասիրութեան նպատակը բացատրե-
լու համար, բայց Յիսուս դարձեալ
գոհ չը լինիր, այլ իւր պատմութեան
մէջ յառաջ կը բերէ ուրիշ անձինք
եւս, որոնք թէ և Հրէայ, թէ և պաշ-
տօնեայ կրօնի, թէ և քահանայ և ներ-
կայացուցիչք ժողովրդեան, կ'անյնին
և կը թողուն իրենց համադրին և հայ-
րենակիցը առանց կարեկցելու: Իսկ
Սամարացին, ճանաչելով, և կսմ ա-
ռանց ճանաչելու՝ թէ վիրաւորեալն
Հրէայ է, կ'աճապարէ, կը վազէ դէպ
ի նա, ըստ որում մարդ է, կը տագ-
նալի և ամեն խնամք կը տանի, զոր
միայն եղբայրը եղբօրէն կարող էր
սպասել սոյն պարագայիս մէջ: Սեր
Փրկիչը կարճ և հարեանցի պատմու-
թեամբ գոհ չը լինիր, այլ մի առ մի
կը պատմէ Սամարացւոյ ցուցած իւր
նամքները: Եւ այնպէս կը պատկերա-
ցնէ բարերարութեան պարագանե-
րը, որ մարդ կարող չէ բնաւ առա-
ւել քան զայն բարերարութիւն ե-
րեւակայել այնպիսի դժուար հանգա-
մանքներու մէջ: Կամ աւելի պարզ
ասենք, Յիսուս՝ թուելով այն պարա-
գաները, ինչ որ մարդիկ կարող չեն ե-
րեւակայել, Սամարացւոյ օրինակաւ
կամի բարերարութե գերագոյն գա-
ղափար մի տալ: Եւ արդարեւ, Յի-
սուսի պատկերացուցած պատմութիւնը

բարերարութեան սքանչելի տիպար
մ'է, որուն մէջ կը տեսնենք ակնե-
րեւ, մարդասիրութեան պարտքը
այնպէս անթերի և այնքան գեղեցիկ
կերպիւ կատարուած, որ մարդ կա-
րող չէ երբեք երեւակայել:

Պէտք է ասել, որ Վեւտոցին և
քահանան, վիրաւորեալ ճանապար-
հորդէն խուսելու համար, մի այլ յա-
տուկ պատճառ ունէին՝ քան թէ ան-
տարբերութիւնը և անկարեկցութիւնը:
Այն աւաղակները, որոնք ճանապար-
հորդը վիրաւորած էին, կարելի է թէ
շատ հեռացած չէին նոյն տեղէն և
պատեհ ժամու կը սպասէին, որ եթէ
անցաւ որ մի կարեկցի վիրաւորելոյն
վրայ, իսկոյն յարձակին, կողոպտեն,
և իրենց ագահութիւնը նորանոր զու-
հերով յագեցնեն: Սնանաւոր որ
սոյն ճանապարհը, իւր մէջ յաճախ
պատահած մարդասպանութեանց հա-
մար, երկար ժամանակէն ՚ի վեր, ճա-
նապարհ արեան կը կոչուէր, և պատահար
մի չեղած ժամանակն իսկ՝ անցաւոր-
ները չէին վստահեր կանգ առնու-
լ: Բայց, պարտաւորութիւնը, թէ և
դժուար և վտանգաւոր, դարձեալ
պարտաւորութիւն է, և դժուար պար-
տաւորութիւն կատարող մարդն ա-
ւելի կը բաղմնապատէ իւր փառքը և
սրատիւր: Հետեւապէս, Սամարացին
վայելեց այս փառքը, զոր միւս երկու
ճանապարհորդքն ևս կարող էին վա-
րելը: Սամարացին ոչ թէ միայն կանգ
կ'առնու վիրաւորեալը իւր գրաստի
վրայ դնելու համար, (եթէ միայն
այս լինէր նորա հոգացողութիւնը,
գուցէ աւելի մնասակար քան թէ
օգտակար լինէր վիրաւորելոյն, որոյ
կեանքը իւր արեան հետ կը հոսէր),
այլ վերքերը կը կապէ ու կը պատէ,
և ձէթ ու գինի կը հեղու վրան, զորս
բարեբաղդաբար պատրաստի ունէր:

Գուցէ անհաւան թուի ձէթ և գինի պատրաստի ունենալն, բայց սոյն այս անհաւանութիւնն է, որ աւելի գեղեցիկութիւն կուտայ սրտմութեանը, վասն զի աւելի բացայտ կերպով կը պատկերացնէ Սամարացւոյն հոգն ու խնամքը և նորա քաջատրտութիւնը, որով ամեն վտանգ կ'արհամարհէ սոյն մարդասիրական բարի գործը կատարելու համար: Սամարացին վիրաւորեալը գրաստի վրայ կը դնէ և կը տանի մի պանդոկ, և ոչ թէ լոկ պանդոկապետին կը յանձնէ, (որ իբրեւ մարդ պարտական էր մնացած հոգսը ինքը քաշել,) այլ կը դարմանէ և կը հոկէ, որպէս զի կարեւոր խնամքները չը զլացուին, և այս առթիւ գուցէ երկար ժամանակ իսկ կը մնայ պանդոկի մէջ: Եւ միթէ այս միայն: Սամարացին կը թողու վիրաւորեալը, բայց իսպառ չը բաժնուիր, նա կը խոստանայ շարունակել իւր օգնութիւնը մինչեւ վիրաւորելոյն կատարեալ բժշկութիւնը, նա կը խոստանայ նա ամեն ծախք վճարել: Ինչո՞ւ պանդոկոպետը կամ այլք իրենց վրայ չեն առնուր յաջորդել Սամարացւոյն և ինքնին կատարել ինչ որ նա կը խոստանայ կատարել: Ոչ ապոքէն բարեգործութեան գեղեցիկ դէպք մ'է այս, որ իրենց կը ներկայանայ, ինչ պէս ներկայացաւ Սամարացւոյն ճառարհին վրայ: Սիթէ նոքա պարտական չէին վիրաւորելոյն օգնելու: Սիթէ Սամարացւոյն աւելի մերձաւոր էր վիրաւորեալը քան թէ նոցա: Կարող ենք ասել արդեօք, թէ այն կողոպտեալ անձը կարողութեան տէր չէր և միջոցներ չունէր իւր անձի բժշկութեան և պահպանութեան դարմանները հոգալու: Բարեգործ Սամարացին ամենեւին չընկատէր այս պարագաները: Եւ ամենեւին չու-

ղէր հարցախուզել և իւր բարերարելոյն սիրտը խռովել: Եւ միայն կը խորհի վիրաւորեալը դարմանել և բժշկել: Եւ յատուկ պարտաւորութիւն կը համարի այս խնամակալութիւնը և քանի որ սոյն պարտքը կատարող պատրաստական և յօժարաւ կամ մարդ չը կայ, բնաւ չուղէր թողուլ և զանց առնել: Սիթէ նը կատելով որ վիրաւորեալը դարմանելու համար իւր ներկայութիւնը այլ եւս կարեւոր չէ, կ'երթայ ուրիշ պարտաւորութիւններ կատարել: Բայց երթալէն առաջ կը վճարէ պանդոկապետին, թէ՛ այն ծախքը, որ արդէն եղած էր, և թէ՛ այն ինչ որ պիտի լինէր, Բայց յայտնանէ, կ'ասէ պանդոկապետին, «Ես ամէ և դարմանէ՛ սոյն վիրաւորեալը, և եթէ իմ տուած դրամէն աւելի ծախք ունենաս, լրիւ կը հատուցանեմ իմ վերադարձին, Բայց թէ կը յայտնէ՞ արդեօք վիրաւորելոյն թէ ո՞վ է ինքն, և կամ թէ յառաջ քան իւր ուղեւորին երախտագիտութեան ցոյց մի կը տեսնէ՞ վիրաւորելոյն կողմէն, Եւ մասին աւանակ ինչքոստի աստուածային պատմիչը և մենք եւս կարող չենք մեր կողմէն բան մի ենթադրել:

Երկնաւոր Վարդապետը կարեւոր պարագաները թուելով կամի հասկացնել մեզ իւր պատմութեան հիմնական գաղափարը և սկզբունքը: Սամարացին և վիրաւորեալը կապուած էին իրարու հետ միայն ձախորդութեան և կարեկցութեան կապով: Վիրաւորեալը միայն մարդ էր, և ոչ թէ ազգակից, կամ եղբայր կամ քաղաքակից Սամարացւոյն: Բայց Սամարացին ամէն բան կը կատարէ, ինչ որ կարելի է սպասել միայն ազգակցէ, քաղաքակցէ և եղբորէ, թէ և սոյն սոկնիստութեան կատարումն իսկ շատ

անգամ չը տեսնուիր : Այսպէս կը պատասխանէ ահա մեր Տէրը Փարիսեցի օրինական վարդապետին , երբ արդար երեւելու յուսով կը հարցընէ . « Եւ ո՞վ է իմ ընկերս » : Բայց լաւ կը նկատէք , թէ ինչ եղանակաւ կը պատասխանէ մեր Փրկիչը : Օրինականը կը հարցնէ . « Ո՞վ է իմ ընկերս » : Իսկ երկնաւոր Վարդապետը միայն չը պատասխանէր , թէ քո ընկերն է ամեն մարդ , ով որ օգնութեանդ և ողորմութեանդ կարօտ է , ով որ քեզ բարի կը ցանկայ և բարի կ'առնէ : Սիւնի չը պատասխանէր թէ՛ աւաղակաց ձեռքն ընկած մարդոյ ընկերն նա էր , որ գթացաւ , կարեկցեցաւ և ամեն վտանգ յանձն առնելով խնամք տարաւ նորա բժշկութեան և պահպանութեան համար : Կարճ ասենք , միայն չը պատասխանէր թէ՛ տառապելոյն ընկերն իւր բարերարն է , և բարերարին ընկերը իւր բարերարեալը , այլ կամելով ամօթաւ հար առնել այն մարդիկը , որոնք կը խորհին և կը տագնապին թէ որո՞ւն արդեօք ընկեր անուն տան , կամելով ամուսնացնել այն մարդիկը , որոնք առաւել կուսակից կը փնտռեն քան թէ ընկեր և կը ջանան իրենց անձը չը մասնելով՝ ընկերասէր ձեւանալ . կամելով հասկացնել թէ՛ մինչդեռ իրենք կը դժուարին այլոց ձեռք կարկառել , այլք կը փութան և կը կանխեն ձեռք կարկառել , և առանց հետախուզելու իրենց երկիրը , իրենց աղքը , իրենց դաւանութիւնը , իրենց աղանդը , կը կարեկցին իբրեւ մարդ , կը բարերարեն իբրեւ եղբայր , կ'օգնեն իբրեւ աղգակից և բարիք կը զօհեն ու կը դարմանեն իբրեւ ընկեր . վերջապէս , կամելով ընկերսիրութե դաս տալ (Օրինակաւին և ամեն նեղ սիրաներուն՝ կը պատմէ Սամարաց

ւոյն առակը : Սեր Փրկիչը գողցես կամի ասել . « Դուք կը տարակուսիք , դուք կը յապաղէք , և ահա այլք առանց տարակուսելու և յապաղելու՝ կը կատարեն ինչ որ դուք եւս պարտական էիք կատարել : Դուք կը թրւէք , դուք կը հաշուէք , և մանրախոյզ կը լինիք , և ահա այլք կը յառաջեն առ ձեզ իրենց թաթաղուն և զեղուն ձեռքերով : Ինչպէս կը կարծէք , ընկեր են ձեզ նոքա , թէ ոչ , և կամ թէ՛ դուք ընկեր էք նոյա , թէ ոչ : Եթէ նոքա առանց կոչուելու առ ձեզ կը դիմեն , միթէ և դուք կարող չէք քայլ մ'առաջ երթալ առանց կոչուելու : Եթէ նոքա կը կանխեն քան զձեզ և քան զայլս , միթէ կարող չէք և դուք կանխել քան զնսսա և քան զամենայն մարդիկ :

Սիւնի դուք պարտական չէք սիրել ամենքը , որոնք մարդ կ'անուանին : Սիւնի մարդ անունը սուրբ չէ՝ ձեզ համար և չը հրաւիրէր արդէն ձեր համակրութիւնը , ձեր կարեկցութիւնը և անձնուիրութիւնը : Վերջապէս , միթէ ամեն մարդ ձեզ ընկեր չէ : Զբեայ դու , ջանա՛ ուրացիր , եթէ կարող ես , որ Սամարացին քո ընկերդ չէ , որ կը վարուի քեզ հետ եղբայրաբար : Բայց ինչպէս կարող ես դու Սամարացւոյն ընկեր չը լինիլ , քանի որ նա քո ընկերն է :

Ո՛հ , որչափ գեղեցիկ է երկնաւոր Վարդապետի պատմած պատմութիւնը : Այս պատմութեանէն գեղեցկագոյն պատմութիւն չը կայ , բայց միայն Փրկիչ իւր անձին յատուկ պատմութիւնը , որոյ նիւթը կամ առարկայն Սամարացին չէ , այլ նոյն ինքն Յիսուս Քրիստոս : Սամարացւոյն գեղեցիկ և սրտաշարժ պատմութիւն Փրկիչ պատմութեան մօտ տկար և անդօր առակ մ'է միայն : Այն ինքն Յիսուս

կարող չէր իւր պատմութենէն աւելի գեղեցիկ պատմութիւն գտնել կամ ստեղծանել : Պրիչի պատմութիւնը այնքան սքանչելի է, որ ամենայանգու գրն երեւակայութիւնն անգամ, իւր ամենաբարձր թախչներով կարող չէ Յիսուսի պատմութեան իրական բարձրութեանը հասնիլ : Այլ զարմանալին այս է ահա, որ Յիսուսի իրական պատմութիւնը մարդկային երեւակայութեան ամենավերին բարձրութենէն անգամ բարձրագոյն է :

Յիսուս ինքն Սամարացին է Արիքովի ճանապարհին վրայ : Վէրքերով ծածկուած մի մարդ (եւ, դու և իւրաքանչիւր որ) ընկած է ճանապարհին վրայ : Սարգիկ կ'երթան, կ'անցնին առանց օգնելու, վասն զի սոյն ճանապարհին վրայ կանգնին վրտանդաւոր է : Սա է ճանապարհ արեւան և վիրաւորելոյն վրայ կարեկցութեան ակնարկ ձգելն անգամ երկիւղալի է և մահառիթ կարեկցողի կենացը : Իմաստուններն սպանին, մարգարէներն սպանին, կրտսերներն նաեւ ամեն մարդ, եթէ մարդասիրական կարեկցութեամբ կանգ առնու սոյն դրժբադրին օգնելու, որոյ արիւնը կը հոսի հաղարաւոր տեղերէ : Այլ տալիք և քահանայք անգամ, որոնք կարեկցելու յատուկ պաշտօն և պարտք ունէին, հաղարաւոր անգամ անցան, իրենց աչքերը յետո դարձնելով և երբէք վիրաւորելոյն վրայ չը նայելով : Յիսուս Քրիստոս եկաւ, բայց ոչ թէ անցնելու՝ այլ յատկապէս վիրաւորելոյն օգնելու համար : Աս գիտէր արդէն որ մահամերձ մի կայ, որուն կարեւոր են իւր խնամքները : Աս գիտէր, և զարմանալի չէ ուրեմն, որ իրեն հետ գինի և իւղ ունէր : Աս գիտէր, որ վիրաւորեալ մի կայ իւր առջեւ : Արեւան ճանապարհն

խկապէս նորա ճանապարհն է : Աս իւր բանիւ իւղ և գինի կը հեղու վէրքերուն վրայ : Իւղ՝ որ կը մեղմէ ու կը կակղէ. գինի՝ որ կը կազդուրէ և կը զօրացնէ : Աս գրաստի վրայ չը դնէր վիրաւորեալը, և արդէն գրաստ չունի, այլ կը դնէ իւր ուսերուն վրայ, կամ, աւելի լաւ է ասել, կը դնէ իւր կուրծքին վրայ, կը գրկէ, կը փարի և սոյն արիւնաթաթաւ, վշտահար ու ողբահար զոհը, լեռնեբու և ձորերու մէջէն, կը տանի պանդոկը :

Ամեն ծախք կը վճարէ, տմեն դարման կ'երաշխաւորէ, նաեւ կը խորհի ու կը հոգայ ապագայի համար, իւր երթալէն զինի իւր Հոգին պիտի հսկէ նորոգ ապաքինելոյն վրայ : Բայց, եղբարք, ինչե՞ր կան տակաւին աւելցընելու, որպէս զի առակը համապատասխանէ իրականութեան : Պէտք էր որ Սամարացին թագաւոր լինէր կամ ժառանգ թագաւորի : Պէտք էր որ նա իւր փառաց մէջէն լսէր Թուշուառին աղաղակը ամայի ճանապարհի մահաշուկ մթութեան խորքէն, Պէտք էր, որ սոյն գերեզմանական տիւուր աղաղակով ճանաչէր նա իւր ապերախտ թշնամւոյն ձայնը : Պէտք էր որ նախատեսէր նա իւր մահը, ոչ իբրեւ պատահար, այլ իբրեւ վարձ իւր մարդասիրական գործոյն : Պէտք էր, որ այս գործը կատարելու համար՝ անօգնական և անթիկ նապահ լծանէր նա ի գիշերի այն տեղը, ուր վիշտ ու չարչարանք զինքը կը կոչէին : Վերջապէս, պէտք էր, որ նա, ի լուծմն իւր անհուն սիրոյ և մարդկային սոսկալի ատելութեան, մահուան ակնկալէր և մահը այն մարդոյ ձեռքէն ընդունէր, զոր փրկել կը փութար : Ահ, մեր ամեն ջանքերը ունայն են, առակը ան

զոր է այս ամենը բացատրելու . խօսքը և երեւակոյցութիւնը կը գալարին և տեղի կուտան իրականութեան առջեւ : Թողո՞ւնք ուրեմն առակը , թողո՞ւնք ստուերը և պատմենք Յիսուսի Վրիստոսի կեանքը և մահը , որ իջաւ խաղաղութեան և փառաց բարձունքէն , եկաւ միանալու մարդկային բնութեան հետ և ամեն չարչարանք կրելու իւր անձին մէջ : Բնութենէն իւր անմեղ գլխոյն վրայ Աստուծոյ բարկութեան և ցասման ամեն նետերը : Եկաւ ճշմարտութիւն խօսելու՝ ոչ միայն վտանգներէն չ'երկնչելով , այլ և իւր կեանքը դրաւ ահապ զնեղով ճշմարտութեան համար : Հալածուեցաւ , չարչարուեցաւ և ի խաչ բարձրացաւ նոցա համար , զորս կը սիրէր : Այսով բանիւ , եթէ համեմատենք՝ թէ ի՞նչ էր նա երկնքի մէջ , և ի՞նչ եղաւ երկրի վրայ . եթէ կշռենք՝ թէ ի՞նչ բանի արժանի էր նա մարդկանց կողմէն և ի՞նչ ընկալաւ , կը տեսնենք անձնութեան իրութեան և սիրոյ անհուն տիպար մի , զոր ոչ միտք կարեն չափել և ոչ լեզուք և բանք կարեն նկարագրել :

Այո , սիրելի եղբարք , այլք խօսած էին կանխաւ , և Յիսուս Վրիստոս ամենէն լաւ խօսեցաւ և բացատրեց՝ ի՛նչ է ի՛նչ և ի՛նչ է սիրելի : Բայց , կարո՞ղ են արդեօք կանխատեսներու այնքան խօսքերը և ճառերը , նաեւ (ներեցէք ինձ ասել) կարո՞ղ են նոյն իսկ Յիսուսի խօսքերը համեմատել այն կենդանի պերճախօսութեան հետ , այն ամենազգեցիկ բարբառոյն հետ , զոր խօսեցաւ Յիսուս կենօք և մահուամբ , կենօք , որ արդէն մահ էր , և մահուամբ , որ էր մահ խաչի : Այն թէ Յովհաննէս Առաքեալն , իրաւունք չունէր ասելու . « Աստուծոյ դիտացոյցը զէնն Աստուծոյ , զի նա

եղ զանձն իւր վտան մեր » : Ա . Յովհ . 9 . 16 :

Այն թէ սահման և մեկնութիւն , ոչ թէ դատողութիւն և փաստաբանութիւն , այլ գործ կը տեսնենք այս տեղ և իրականութիւն — Յիսուս եղբայրս ի՛նչ վասն մեր : Կամք իմանալ թէ ի՞նչ է մարդասիրութիւնն : Եւ ի՞նչ պատասխան , » Յիսուս եղբայրս : Յիսուս դրաւ իւր կեանքը մեր ամենուս համար , այսինքն օտարաց և թշնամեաց համար : Եթէ ասէք՝ թէ Յիսուս աւելի մօտ էր մարդոյն , քան թէ նոյն ինքն մարդն՝ իւր պատկերակից մարդոյն : Եթէ ասէք՝ թէ Յիսուս առաւել պարտաւորեալ էր առ մարդ , քան թէ մարդն՝ առ մարդ : Եթէ ասէք՝ թէ Յիսուս իւր անձնութեան իրաւունքով այնքան խելագարեցաւ իւր անձնութեան , որչափ եթէ մարդ իւր անձնութեան իրաւունքով իւր անձնութեան համար : Եթէ ասէք՝ թէ Յիսուսի համար աւելի բնական էր մարդկային անարգ և նուազ բնութեան հետ միանալ , քան թէ մեղ համար՝ մեր թշուառութեան և գերութեան ընկերակիցներու հետ : Եթէ այսպիսի կարծիք ունիք , այն ժամանակ աւելորդ է մեղ խօսիլ : Բայց , իմացէք , որ ըստ ձեր ենթադրութեան , այն ժամանակ , Յիսուս ոչ երկնքէն յերկիր իջած կը լինի , ոչ իւր աստուածային մարդասիրութիւնը ցուցած կը լինի , ոչ խաղաղութիւն բերած կը լինի մարդկանց և ոչ ինքն մարդկութեան Փրկիչ կը լինի : Կարճ ասենք , աստուածային անհուն գթութեան և անսահման զոհողութեան պատմութիւնը կը լինի միայն լի գիւտ հնարից և երազ ցնորից : Այն այն մարդկանց , որոնք այսպէս կ'ենթադրեն և այսպէս կ'երազեն : Բայց եթէ կը հաւատարմութեամբ , որ Յիսուս Վրիստոս էր և ա-

բոլոր ամեն բան , ինչ որ կը պատմենք
[Նեոտարանին համեմատ . միով բա-
նիւ , եթէ քրիստոնեայ էք դուք , հաս-
տատ իմացէք , որ այն Սէրը , որ մար-
դացաւ՝ մարդիկը փրկելու համար ,
և սիրեց մարդիկը իբրեւ մարդ , այն-
պիսի կնիք մի դրոշմեց նոցա ճակտին
վրայ , զոր երբէք կարող չէք դուք
ջնջել :

Իմացէք , որ այն արարածը , որուն
համար Մտուած չը խնայեց իւր Սի-
ածին Որդին , այն արարածը սուրբ
եղած է ձեզ համար : Իմացէք , որ ե-
թէ նոյն արարածին զանաք ձեր սէ-
րը , նախ Մտուածոյ կը զանաք , որ
սիրեց և պատուիրեց սիրել : Իմացէք
որ ձեր երախտագիտութեան ցոյցե-
րը կարող չեն երկինք բարձրանալ առ
Մտուած , որ անկարօտ է շնորհակա-
լութեան . այլ պէտք է որ ձեր երախ-
տագիտութիւնը իջանի և ծաւալի
ձեր շուրջը , և եթէ հնար է , զեղա-
նի ամենուն վրայ առ հասարակ , զորս
Որդին (Մտուածոյ) բաղմաշարչարն Յի-
սուս որոնեց , սիրեց և օրհնեց : Իսկ
կարող չէք խտրել . վասն զի Յիսուս
չխտրեց . կարող չէք չհամարել ընկեր ,
զոր նա ընկեր համարեց : Որո՞ն հա-
մար կ'աղօթէր Փրկիչն , և զով կը սի-
րէր : Որո՞ն վրայ կուլար և կ'արտա-
սուէր : Որո՞ն համար արիւնը ոլոռն
ողոռն կը հոսէր իբրեւ քրտինք նորա
մարմնէն : Որո՞ն համար կայլակ կայ-
լակ կ'իջանէր արիւնը Խաչի վրայ նո-
րա վիրաւոր անդամներէն : Եւ խոր-
հա՞ծ էք արդեօք այս բանիս վրայ :
Նա , որ ծովերով և ցամաքներով
բաժնուած էր մարդկութենէն . նա ,
որ դարերով բաժնուած էր անցեալ
և ապագայ սերունդներէն , նա պատ-
կերացուցած ամբողջած ունէր իւր
խորհրդոց մէջ ամեն ժամանակաց և
ամեն տեղեաց մարդկութիւնը : Հա-

մօրէն մարդկութիւնը կ'ապրէր նո-
րա սրտին մէջ իբրեւ մի մարդ : Նա
կը սիրէր անցելոյն մէջ ամենքը , որոնք
ճարտ անունը կը կրէին . կը սիրէր ա-
պագային մէջ ամենքը , որոնք նոյն ա-
նունը պիտի կրէին : Նա , սիրելու
համար՝ կարօտութիւն չունէր որո-
շել և ճանաչել զձեզ : Նորա սէրը յա-
ռաջ էր քան զձեզ : Չեր ծնած վայր-
կենին պիտի տեսնէիք որ նա կըսպա-
սէ ձեզ՝ փրկելու համար : Նա յա-
ռաջագոյն կը վշտակցէր ձեզ , նա յա-
ռաջագոյն կ'ողբար ձեր մեղաց հա-
մար և կ'աշխատէր ձեզ հետ , փրկ-
կութեան մէջ վերածնելու համար :
Ի՞նչ հարկ կար առանձնակի զձեզ
ճանաչելու . քանի որ կը սիրէր նա
զձեզ իբրեւ մարդիկ և ոչ իբրեւ ան-
հասներ : Այո , մարդն էր , զոր կը
սիրէր մարդասէրն Յիսուս : Այլ թէ
այս ինչ կամ այն ինչ երկրի մարդը ,
ոչ թէ անցելոյն կամ ապագայի մար-
դը , ոչ թէ աւելի ծանօթ քան թէ
անծանօթ մարդը , այլ իսկապէս մար-
դը , որ ամեն տեղ հաւատար է յաչս
Յիսուսի՝ Բրիստոսի , հաւատար է
ծագմամբ , հաւատար է անկմամբ ,
հաւատար է վշտակրութեամբ , հա-
ւատար է փառօք : Ար սիրան է որ չը
դողար այս մտածմունքներուն վրայ :
Այլ թէ չը զարթնուր մեր բարոյական
թշուառութեան մէջ մարդկային ըն-
կերականութեան և հաղորդակցու-
թեան ազնիւ ու սրտաշարժ բնազ-
դումը : Այլ թէ չէ՞ք զգար , որ մենք
սոյն մեծ մարմնոյն — մարդկութեան —
անդամներն ենք : Չէ՞ք զգար ար-
դեօք ինչպէս նորա վիշտը , նոյնպէս
և մերը , չէ՞ք զգար արդեօք , որ մենք
պատասխանատու ենք ինչպէս անձ
նական , նոյնպէս և հանրական չար-
եաց և աղէտից համար : Չէ՞ք զգար
և չէ՞ք իմանար արդեօք , որ մենք

պարտաւոր ենք գրկել համօրէն մարդ-
կութիւնը մեր սիրոյ մէջ, մեր ազօ-
թից մէջ, և պարտինք կրել, իւրաքան-
չիւրս ըստ մեր կարողութեան: «Սարգ-
իսի ազգի ազգի» բեռնը ինչպէս կ'առէր
երբեմն պերճախօս ոմն սրբանուէր:

Ես գիտեմ և կը վկայեմ, որ սոյն
զգացումը ամենեւին օտարոտի չէ
մարդոյ համար, և երբ Յիսուսի ան-
ձին մէջ օրինակը կը պատկերացնենք,
ապահով ենք որ անշուշտ նոյն զգա-
ցումը կը զարթնու ձեր մէջ, եթէ
թմրած է: Բայց ինչքան անզօր է ը-
փաթ և յողգողգ զգացումը այն գը-
րական և վսեմ պարտաւորութեան
առջեւ, զոր Յիսուսի Վրիստոսի մար-
դասիրութիւնը ստեղծեց և սահմա-
նեց իւրաքանչիւրիս համար: Վրիս-
տոնեայք, նայեցէք այն արիւննոտ ճա-
նապարհին վրայ, ուստի եկաւ անց-
նելու մեր Տէրը: Հետեւեցէք Յի-
սուսին մենչեւ ճանապարհի այն սոս-
կալի եզրը, ուր կը մեռնի ոչ թէ
մարդը, այլ մարդկութիւնը, Եւայե-
ցէք, զննեցէք մինչ ի կատարած՝ Յի-
սուսի անհուն մարդասիրութեան գոր-
ծը: Վրիստոնեայք, Վրիստոսի օրի-
նակը հաղարաւոր վերաւորներ ձեր
գիրկը կը ձգէ, որոնք յար և նման են
Երեքսով ճանապարհի վերաւորներն:
Եւ ձեզ կը յանձնէ համօրէն մարդ-
կութիւնը և իւրաքանչիւր որ կոչուած
է նոյն մարդկութիւնը սիրելու: Ե-
մեն քրիստոնեայ ամեն մարդոյ կը
պատկանի, և թէպէտ ունի յատուկ
պարտաւորութիւններ, որ ամենուն
չեն վերաբերի, բայց սիրոյ պարտա-
ւորութեամբ կապուած է ամենուն
հետ: Վրիստոնեայ չէ նա և ճանա-
չած չէ զՅիսուս Վրիստոս, ով որ
զուրկ և օտար է մարդասիրութեան
զգացումէն, և որուն համար սովա-
րական չէ նոյն զգացումն: Վրիստո-

նեայն պարտական է ոչ թէ հատ հատ
սիրել մարդկութեան անդամները,
զորս զէպքերը և պարագաները կը
մօտեցնեն իրեն, այլ պարտական է
սիրել մարդկութիւնը Յիսուսի Վր-
րիստոսի նման: Եւս է ճշմարիտ Վր-
րիստոնեութեան նշանը և փառքը:

Բայց մի գուցէ կարծուի թէ մենք
կը շփոթենք մարդկութեան սիրոյն
հետ մեր յատուկ ցեղի այն անմիտ
պաշտումը, այն մարդկային ամբար-
տաւանութեամբ ամբարտաւիր, որ մարդ-
կութիւնը ցնորական անհատ համա-
րելով, անհատներու գոյութիւնը
ժխտելով՝ առանց իրարու հետ միա-
յրնելու, և անորոշ ու անկոպար մը-
տածութեամբ երկրորդ Վաբեւնի
կամ խառնակութեան դործաւորներ
երազելով, կը ձգտի նորոգել վերըս-
տին լեզուաց խառնակութեան հը-
րաշքը: Այն գուցէ կարծուի, թէ
մենք կ'ուզենք շփոթել մարդասիրու-
թեան հետ այն մոլի տենչանքը, այն
ցեղական միակերպութեան շարքեալ
պատրանքը, որով ոմն Համա-Վեր-
մանական և ոմն Համա-Սլաւեան
պատրուակաւ կը ձգտին հարիւրա-
ւոր լեզուներու եւ ժողովուրդնե-
րու գոյութիւնն խառնել շփոթել
ի մի ձուլել, եւ աշխարհակալու-
թեան թմբուկ հարկանելու ժա-
մանակ՝ ջանալ հաւատացնել մարդ-
կանց, թէ մարդասիրութեան ոգւով
կը վառին և կը շարժին: Վաւ լի-
ցի մեղքալուրդները այս ցեղապաշտա-
կան կամ աւելի ըստ է աւել ցեղա-
կործան մոլութեան այլանդակ ցը-
նորքները: Անք մարդասիրութիւնը
Յիսուսի օրինակէն կ'առնունք: Յի-
սուսի Վրիստոսի սիրել հրամայած
մարդկութիւնը՝ մարդիկն են և ոչ
թէ վերացականութիւն: Սարգիկն
են, զոր սիրեց նա, և մարդիկն են,

գործ եկաւ փրկելու : Մարդիկ փրկուածեան անմիջական առարկայ են կամ ենթակայ և ոչ թէ գործիք : Սուտ է ամեն փրկութիւն , որոյ առարկայն մարդը չէ : Բնկերական յառաջագիմութիւնը Յիսուսի Քրիստոսի փրկագործութեան վերջին նըստատակն է միայն , և այս բնկերակա նութիւնը անհատներէ կը կազմի և ոչ թէ վերացականութենէ : Անհատները յատուկ անհատական արժանաւորութիւն ունին : Այդքա կ'ապրին ինքնին , կ'ապրին Աստուծոյ անմիջական իշխանութեան տակ : Այդքա լոկ գործակատարք կամ պատուանդանք չեն հաւաքական յառաջագիմութե , որ նշան է միայն անհատական յառաջագիմութեան : Յիսուս եկած է ոչ թէ վերացական բնկերականութիւնը փրկելու , և ոչ թէ բնկերականութիւնըն է որ երկինքը պիտի տեղափոխի և կամ պիտի պսակուի ընտրելոց անթառամ պսակով , այլ անհատները : Մարդկութիւնն իրական մարմին մի կը կազմէ ինքնին Աստուծոյ խորհրդեան եւ նպատակին համեմատ և կը պատերազմի , թէ և յանգէտս , նոյն նպատակը կատարելու համար⁽¹⁾ :

(1) Մարդկութիւնը , այն իմաստով , կարող ենք իրրեւ մի մարդ համարել . վասն զի , մինչդեռ ամեն կենդանի իւր տեսակին մէջ նոր սկսող մ'է՝ ամեն նկատմամբ , մարդն այնպէս չէ , նա ոչ թէ նոր կըստի , այլ կը շարունակէ մարդկութեան գործը , Նա կը ժառանգէ ամեն դարուց ժառանգութիւն : Նա համայն մարդկային ազգի զաւակն է : Ի սկզբանէ անտի մինչեւ ցայսօր ինչ որ կ'ըջ հազարաւոր պատճառներէ և հազարաւոր անձինքներէ յառաջացած են , Անբնկերական մարդը , թէ ժամանակի մէջ և թէ տարածութեան , ճշմարիտ մարդ չէ : Սաստիկ և յարատեւ առանձնութիւնը կ'անասնայնէ զմարդ և անասունն աւելի կը ստորացնէ , որովհետեւ մարդը չունի անասնոյ անփոփոխ բնազդում , այլ միայն տկար բանականութիւն , որ շուտով կը խաբխարի և կը չքանայ : Ուրեմն անհրաժեշտ է մարդկութենէն արտաքոյ մարդոյ գաղափար յղանալ , վասն զի մարդը անգոյ է առանց

Պէտք է միանալ , պէտք է ջանալ ի սէր մարդկութեան և ի փառս Աստուծոյ , սոյն անհատ նպատակի կատարման համար : Մարդկութիւնը կը չարչարի և կը հառաչէ , պէտք է գոնէ չարչարիլ և հառաչել նորահետ , պէտք է աղօթել նորահամար , պէտք է վշտակցիլ այն երկանցը , որ կը տագնապէ , կ'ալեկոծէ և կը կտրատէ նորահարգանդը : Նա կը ցաւի , նա կ'երկնէ , և պէտք է որ ծնանի Աստուծոյ համար նոր աշխարհ և յառաջեցնէ այն վայրկեանը , յորում ամեն մարմին ծունը պիտի կրկնէ Յիսուսի առջեւ , և ամեն լեզու պիտի պարտաւորի մարդարէանալու և խոստովանելու , որ նա է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր :

Բայց մարդկութիւնը կ'աշխատի մարդկանց համար , և եթէ աջակցիք դուք մարդկութեանը , իմացէք , որ դարձեալ մարդկանց համար է , որ կ'աշխատիք : Վասն զի մարդիկն են , զորս Յիսուս հրամայեց ձեզ սիրել :

Քրիստոնեայք , եթէ դուք ճանաչեցիք և իմացաք Յիսուսի սէրը , եթէ ձեր սիրտը Յիսուսին նուիրած էք , եթէ դուք նորա գործունքն ունիք , եթէ վառուած է ձեր մէջ մարդկային եղբայրութեան սուրբ բղ

մարդկութեան : Մարդ մը երեւակայել իւր ցեղի բոլոր կատարելութեամբ՝ երեւակայութեան ցնորք է . վասն զի մարդկութեամբ է , որ մարդը մարդ է : Բայց այնպէս չէ միւս կենդանեաց նկատմամբ : Նոքա չունին մարդկային ցեղին սեպհական համեմատութիւնը կամ համեմատարարութիւնը : Սակայն զարմանալին այս է , որ ինչպէս ճշմարիտ բնկերականութիւնը , նոյնպէս և կատարեալ անհատականութիւնը միմիայն մարդկային ցեղին սեպհական է : Միթէ զարմանալի չէ , որ Աստուծոյ համբոյն արարածոց մէջ միայն մարդն է , որ իւր տեսակին հետ միանալով կը հասնի կատարելութեան , և դարձեալ մարդն է , որուն մէջ իրապէս կ'երևի դպրցումն աւատութեան , բարոյականութեան և գիտակցութիւն իւր էութեան :

գայումը, որ շինած էր մեզօք, ինչպէս և շինած էր Բաղարուֆ հետ ունեցած ձեր հաղորդակցութեան հուրը. եթէ դուք վերածնած էք իսկապէս, անշուշտ կը մասնակցիք փրկութեան մեծ գործոյն, կը շարունակէք զայն Փրկչի անուամբ, կը հետեւիք նորա օրինակին, կը դիմէք, կը թռանիք դէպ ՚ի Լըրիքովն ճանապարհը, կ'ընթանաք Փրկչի հետքերով, կ'օգնէք ամեն ազգի ամեն յեղին և ամեն լեզուի վերաւորներուն, և ուրիշ փոխարէն չէք պահանջեր ձեր սիրոյն համար, բայց միայն սիրել, միշտ սիրել, և աւելի սիրել. վասն զի սիրելէն կըսկսի մարդոյ երջանկութիւնը, և ով որ շատ կը սիրէ, շատ կը վարձատրուի:



ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐԸ

(Շարունակութիւն, տես թիւ 7.)

Մինչդեռ Սրբազան Պատրիարքը հանդերձ համայն իւր Միտրանութեամբ սուրբ Յակովբայ և սուրբ Փրկչայ Հայոց սեպհական վանքերուն անցեալ տարուան անցքերը յիշելով և քանիցս անգամ Բ. Դուռը թէ սուրբ Լըրուսաղէմէն և թէ Պօլիս ազգային Վարչութեան կողմէն առնուած խնդիրներուն պատասխանին կը սպասէին ակնդէտ, նրա Փրկչայ վանքին մէջ Վատինաց պատարագ ընելու օրն հասաւ Սոյիս 17, յերկրորդ աւուր Պէնտէկոստէի: Բանի որ այն օրը կը մօտիկնար, այնքան ալ Վատին միաբաւնութեան և իւր ժողովրդեան կողմէն շշուկները կը շատնար: Վասն զի սպասուած փրկարար հրամանները ուշա-

ցաւ և սուրբ Բաղարուֆ Վսեմ. Սուրբառութիւն Վլի պէյն ալ նոր եկած ըլլալով անցեալ տարուան անցքերուն բոլորովին անմանօթ էր, ուստի հարկ եղաւ Սրբազան Պատրիարքին, նորին Վսեմութեան քով երթալ թէ օրերուն մօտիկնալը և թէ մինչեւ ցարդ տրուած խնդիրներուն պատասխաններուն ուշանալուն պատճառն իմանալ, և հարցնել թէ արդեօք ինքը լիովին տեղեկութիւն ունի՞ այս գործերուն վրայօք: Նորին Վսեմութիւնն պատասխանեց թէ, քանի որ ինքն նրա Բաղարը եկած է, նոյն գործերուն վերաբերեալ հրամաններ երբէք եկած չեն, և ոչ ինքն այդ գործերուն եղելութեանը վրայօք տեղեկութիւն ունի: «Պօլիս եղած ժամանակս, յաւելցուցնա, հարեւանցի լսեցի, բայց և այնպէս կատարեալ տեղեկութիւն ունիմ՝ ըսել չէ այդ: Աստի թէ և ես կ'ուզէի յատուկ այդ գործին համար ձեր հետ խօսիլ, և տեղն ՚ի տեղն իմանալ, ալ կը կարծէի որ դեռ բաւաւ կան օր կ'ուզէ Վատինաց պատարագ զելուն, իսկ քանի որ օրերը մօտիկցած են, ուրեմն խնդրեմ որ օրինաւոր կերպիւ եղելութիւնը ինձ ճիշտ իմացընես ինչպէս սկսուին, և հիմոյ որ կէտին եկած հասած ըլլալը»:

Բոտ խնդրանաց Վսեմ. Սուրբառութիւն Վլիյն պատմեց Սրբազան Պատրիարքն մի ըստ միօջ նրա ժամանակէն մնալն, դատին ինչպէս սկսուելըն, ետքէն պատահած պատահարներն, անցեալ տարի Բ. Դրան հրամանաւ սուրբ Բաղարս եկած Վսեմ. Վլի փաշային և Սիւնիք էֆէնտիին և Վամասկոսի Վաղղիոյ Հիւսիսոսին ներկայութեամբ այս խնդիրներուն յուղուիլն ըստ կարգի ինչպէս որ պատմուեցաւ մինչեւ հիմոյ Սիւն հանդիսին միջոցաւ, և այս քըն-

նութեան արդիւնք տեղեկագրին Պօլիս զրկուին եւս իմացուց :

« Բաժ տեղեկագրին Պօլիս զրկուիլը լաւ գիտէք . » հարցուց Նիւրին Վսեմութիւնն :

« Պօլիս զրկուիլը լաւ չեմ գիտեր, բայտ Սրբազան Պատրիարքը, այլ սա միայն գիտեմ որ Վսեմ. Վալի փաշային ասկէջ բաժնուելու միջոցին երբ թախանձանօք իրեն հարցուցի թէ, « Վսեմ. Տէր, դուք կ'երթաք բարեաւ և խաղաղութեամբ, բայց մեր գործերը ինչպէս եղան, և ուր կա յացան : » Պատասխանեց թէ՝ « Դուք միամիտ եղիք, մեր քննութեան բոլոր տեղեկագրերն Պօլիս զրկեցինք առ Բ. Դուռն, Լատուծով կը յուսանք որ քիչ օրէն անոնց պատասխաններն կը ստանամք և ձեզ ալ կը հաղորդեմք, մի վախնաք ձեր իրաւունքները երբեք չեն կորսուիր Սպէի Շահանէտէ : »

« Բայց և այնպէս, բաւ Վսեմ. Սութատարութիւնը, այդ ինչիրը ինչպէս որ դուք կը պատմէք, այնպէս ճիշտ ըմբռնած չէ Բ. Դուռը, վասն զի իմ Պօլիս իմացածս ձեր պատմածէն շատ տարբեր է : Իմ լսածս այս է թէ, նը Յակովբայ և Պրկչայ վանքերն ձեր սեպհականութիւններ չեն, այլ Ռաշի տեղեաց կարգը կը սեպուին, թէ միայն պահպանութիւնն ձեզ յանձնուած է, թէ Վատինք ամեն տարի նոյն երկու տեղերը կը պատարագեն իբրեւ արդար իրաւունք, թէ՝ դուք անցեալ տարի դանոնք վնասած էք, և անոնք այս բանին համար կը բողոքեն կ'աշխատին, որպէս զի կարողանան նոյն իրաւունքը նորէն հաստատել, թէ և դուք բաւական զինուորներ ցուցրցած էք դարձեալ շնորհելու ըստ առաջ նոյն : —

« Բան լիցի, բաւ Սրբազան Պատրիարքն, այդ լուրը բոլորովին սուտ է

և սխալ և ի կողմանէ Վատինաց տաւրածուած պիտի ըլլայ ըստ իւրեանց քմաց . վասն զի ոչ նոյն վանքերը Ռաշի տեղերէն տեղերուն կարգն են, և ոչ ալ նոյն վանքերուն վրայ մաղի չափ սեպհականութե իրաւունք ունին Վատինք, և ոչ ալ Հայոց Պատրիարքը զինուոր բաժնէ մինչեւ ցարդ, և ոչ ալ ընելու միտք ունի, նա և ոչ իսկ կրնայ ընել ճշմարիտը խօսելով, վասն զի վանքերն ընդհանուր Հայոց աղբին արդար սեպհականութիւնն են, այլ Վատինաց մինչեւ ցարդ վայածը Հայոց աղբին կամ միաբանութեան կողմէն շնորհած էր, թէ և մինչեւ ցարդ շնորհած է, այլ այսուհետեւ չլինար նոյն շնորհքը ընելու, և չընելու ալ շատ օրինաւոր և բանաւոր պատճառներ ունի, և այն, եթէ կամիք, Վսեմ. Տէր, այս բաժնեքս դուք ձեզէն կըրնաք ստուգել սուրբ Երուսաղէմի բընակիչ աղգերէն, և շատ ալ դիւրին է, վասն զի ամեն մարդ գիտէ, ամեն աղգ կը վիայէ՝ որ սուրբ Երուսաղէմի սըրբազան տեղիքը, վանքերը և եկեղեցիները երկու կարգի կը վերածին : Ըռաջին կարգինն է, իւրաքանչիւր Ղազի իր ձեռքը օրինաւոր հրովարտաներով և օճէ-Նիւրով ունեցած սեպհական Ղազային վանքերը, որք միայն իրենց կը վերաբերին անկախ յուրեք որոնց բացարձակ տէրն են չինելու, քակելու, և մինչեւ անգամ Ղազային հաւանութեամբ ծախելու, և զայն կը վստելեն ամենայն համարձակութեամբ՝ աղօթելով մեր Բարեխնամ Կայսեր կենաց երկարութեան և խաղաղութեան համար :

Երկրորդ կարգին է Ռաշի-Նիւր իրաւանց տակ եղած սուրբ Տէղիքը, որք կը պատկանին երեք աղգաց, այսինքն՝ Հայոց, Յունաց և Վատինաց, և նոյն տեղեաց համար դարձեալ ի՛նչ

բաքանչիւր ազգ իւր ձեռքը օրինաւոր հրովարտակ կամ եկեղեցի ունի ըստ չափու իւր ունեցած իրաւունքին, որ ըստ այնմ եւս համարձակապէս կը վայելեն իւրաքանչիւր ազգ իւր իրաւունքը միջաբեկութեամբ, ինչպէս են սուրբ (Յարութիւնը, սուրբ Օհունդը, սուրբ Աստուածածնայ գերեզմանն, Քառասնից պարը) (զոր Ատոնք սի-սի մաղարաւ կ'անուանեն), նա եւ Համբարձման լերան վրայ Վրիստոսի Տեառն մերոյ Սանատեղւոյն աւերակ մատուռը, և այլն, ահա ասոնք են առ այժմ յայտնապէս որոշեալ սուրբ տեղիքը որք են միջաբեկութեան ազգաց, թէ և անոնց մէջ տարբեր իրաւունքներ ալ կան իրարմէ աւելի կամ պակաս, բայց անոնք ժամանակին այնպէս կարգադրուած են, ի բաց առեալ զայս տարբեր իրաւունքները, մնացեալներուն մէջ իւրաքանչիւր ազգ ինչ իրաւունք ունի, քանի կանթեղ ունի, քանի պատկեր ունի. իւր արարողութեան ժամանակ երբ կ'ըսկսի, երբ կ'աւարտի. նոյն տեղերուն մէջ իւրաքանչիւր ազգին թափօրը, հանդէսը երբ է, և այլն, ի բնէ անտի որոշուած և կարգադրուած են. որ վասն նոյն տեղերը ոչ որ կրնայ պատկեր մը կամ կանթեղ մը աւելցնել իւր կողմանէն կամ պակսեցնել, և ոչ մէկը իր կարգէն դուրս պատարագ ընել կարող է, և ոչ օր մը իր կարգէն ետ կրնայ կենալ, մինչեւ անգամ նոյն սուրբ տեղերը աւելի և լուալու մասին, կարգադրութիւններ հաստատուած են. եւ եթէ նոյն միջաբեկ տեղերը մէկ քար մը դնել կամ քար մը հանել հարկ ըլլայ, և ոչ մէկ ազգ զայն առանձին կրնայ դնել վերցնել. այլ երբ այնպէս փոքր փոփոխութիւններ հարկ ըլլայ, երեք ազգի գիտութեամբ և յօժա-

րութեամբ և նոյն խօս երեք ազգաց ծախիւք կը շինուին, և եթէ մեծ նորոգութեան պէտք ունենայ, նոյն երեք ազգը մէկ տեղ գալով կը խորհրդակցին, և եթէ համաձայնին իրաւութեամբ, մեր Վարեխնամ (Թագաւորէն հրովարտակ կը խնդրեն երեք ազգաց գիտութեամբ եղած մաղախային համեմատ, և այնպէս կը սկսին վերանորոգութեան, և եթէ չկրնան համաձայնիլ իրարու հետ տեղի մը նորոգութեան մասին, կը մնայ նոյն տեղը յաւիտեան. ինչպէս ահա աչքերնուն առջեւն է սուրբ Յարութեան գմբէթը, զոր նորոգելու համար չկարողացան երեք ազգ միաբանիլ, և որովհետեւ վերանորոգութիւնն ըստիպողական էր, վասն որոյ երեք ազգաց կողմէն երեք Տերութիւն, այս ինքն՝ Վ. Վուռը, Վաղղիայն և Ռուսիայն համաձայնելով և մեր Վեհափառ (Թագաւորին յատուկ հաւանութեամբ շինուեցաւ. նմանապէս ահա սուրբ Օհնդեան պարին առաւ տաղի հնայեալ վարագոյրը որ երեք ազգաց կը վերաբերի, գիտութեան տեղիք չտալու համար վերջապէս մեր Վարեխնամ (Թագաւորը շինել տալ հրամայեց յիւր կողմանէ :

«Վհա նոյն միջաբեկ եղած սուրբ տեղեաց կարգը և կանոնը Ձեր Վեհափութեան խնդրանաց համեմատ համառօտակի պատմեցի : Ասկէ ի զատ կան նաեւ միջաբեկ տեղերուն շուրջ իւրաքանչիւր ազգաց իրեն յատկացեալ տեղեր, զորոնք դարձեալ ամեն մէկը կրնայ քակել, շինել, լուանալ, մաքրել անկախ յովմէրէ, և այլն : »

Ինչպէս որ վերը ըսինք, Ատոնայ միաբանութեան եւ իւր ժողովրդոց մէջ շուրջ բաւականէն աւելի շատցած էր, և տարածայն կարծիքներ և սուտ սխալ խօսակցութիւններ հա-

սարակաց բերանը ինկած . ոյր վասն
ժամ յառաջ այս գործին վախճան մի
տալ հարկ էր . ուստի Ման . Սրբա-
ղան Պատրիարքը խոհեմութիւն հա-
մարեց փութալ Ն . Ս . Սեմութեան
քով երթալ , հետք տանելով պատ-
րաստած խնդրագիրն՝ զոր ներկայա-
ցուց , Ն . Ս . Սեմ . Սութասարբուֆ
Պէկին , որոյ օրինակն հոս կը գնեմք :

« Սայէի իհասն վայէի Հազրէթի
թաճարիտէ վէ էֆէնտիմիզ տախի
Տէվլէթի վէլիւննիմէթ էֆէնտիմի-
զին վէքիլի միւրախիսաս պուլունտու-
ղու հալտէ քեաֆֆէի ումուրի խու-
սուտսթը վտգաամըզ անճադ էֆէն-
տիմիզին բէէյ վէ իրատէի արլէրի
վէճհլէ վիճուտէ կէլէճէկինի հիշար
վէճհլէ շիւպհէ իթմէտիկիմիզտէն
մուգատտէմ վէ մուտիսէրէն արզ
վէ իսթիտա խլէտիկիմ իւզըէ Գուա-
սու Հէրիֆտէ քեախն Սար Լադուս
մանասթըրը ապա էն ճէտ եէտիմիզ
տէ պուլունտան ֆէրմանի Վիշան մու-
ճիպինճէ , քէնտի միւլքիւմիւզ օլտու-
ղու հալտէ Վաթինլէրին սէնէտէ պիր
տէֆա մանասթըրի մէզքիւրտէ զիյա-
րէթլէրինի գապուլ խլէյէ մէյէճէկիմ
շիւնքի տին վէ միլլէթ վէ ալցանէթի
միզէ տօգանուր քէլամ՝ զայրի լայի
գաի մանասթըրի մէզքիւր իշինտէ
գուլաղըմ իլէ քեաֆֆէի միլլէթիմ ի
շիթտիկի հալտէ գապուլ խլէյէ մէյէ-
ճէկիմ աշիքեար օլուսպուլունտան ագ-
տէմ լէնտ տէֆա պա միւզէքէրէ արզ
վէ իշար խլէմիշ իսէմտէ , պիր սէմէ-
րէտի կէօրիւլլէ մէտիկինտէն պահսիլլէ
վէ կիւնլէր թէգարրիւս խլէմէքտէ
պուլունտուղունտան , շիմտիտէն զա-
թի Վլիի ասթիլլէրինէ արզ վէ իս-
թիզան խտէրիմի էյամի մէզքիւրտէ
մէրգուլլէրին զիյարէթլէրի կէրէք
սէնտէնիլ վէ կէրէք միլլէթիմ թա-

րաֆրնտան պիր վէճհլէ գապուլ օ-
լունտայաճաղընտան իճապի հալըն շիմ
տիտէն հիւսնի իֆառնա հիմէմի Վ-
լիի ասթիլլէրի պուլունտուղունտա
լուլթէն վէ իհասնէն պիր ան էվլէլ
նէթիճէի հալըն թարաֆը պէնտէ-
կեանէմէ իշարիլլէ մէրգուլ Վաթին-
լէրին սէնէտէ պիր տէֆա իճրայի ա-
յին խլէմէլէրինտէն սարֆի նազար
պուլունտուլմաը նիյաղը Պապրնտա է-
մըր վէ ֆէրման հաղըթի մէնլէհիւլ
էմրինտիր :

Յի Սէֆէր Վ Սէնէ ԼԼ

Վէ ֆի Ալլիւ Վ Սէնէ ԼՎ

Փալիլի Էրֆէն

Գապուլ Հէրիֆ

« Հատ բարի ըսաւ Ն . Ս . Սեմու-
թիւնն . ըստ ձեր խնդրանաց հեռա-
գրեմ թէ Վ իլայէթին և թէ Բ .
Վուսն . և անկից սոացած հրամանը
եւս ձեզ կը հաղորդեմ :

Վ յսպէս ողջունեալ Ն . Ս . Սեմու-
թիւնն բաժնուեցան իրարմէ :

Խնդրագիրը ներկայացուէլէն յե-
տոյ , որուն մէջ արեւու նման յայտ-
նի կ'երեւի Հայոց ազգային սեպհա-
կանութեան իրաւունքը և անոր վե-
րաբերեալ ամեն պարագայներն , կը
վտահայցնէին Հայոց միաբանութիւն
այնպէս մէկ փրկարար հրաման մը ըն-
դունելու Բ . Վրնէն , որ Վատին մի-
աբանութեանց թէ իրենց բռնաբա-
րութեամբ և թէ օտար աղգեցու-
թեանց ձեռօք պահանջած անիրաւ
պահանջումները իսպառ խափանէր .
և ահա նոյն միջոցին էր որ սուրբ Լ-
րուսաղէմի Ս . Սեմ . Սութասարբուֆ
Պէյէն նամակ մը ստացաւ Սրբաղան
Պատրիարքն , որով կ'իմացնէր և կեր-
պիւ իւրիք Վատինաց թոյլատրել կը
թախանձէր : Վանի որ նոյն շնորհքը

այսքան ատեն ըրած էք կ'ըսէր, հիմայ հարկ չէ ղանալ. և ես կը վստահալ ջընեմ զձեզ որ Վատինաց եւս սաստիկ պատուէր պիտի տամ և սաստեմ որ իրենք ալ նոր ի նորոյ բաներ չհանեն և ձեր կրօնքին և սեպհականութեան դպչելու բաներ չընեն. այլ ամենայն պարկեշտութեամբ, սիրով և խաղաղութեամբ կատարեն իրենց արարողութիւններն. այսպէսով երկու ազգաց մէջ սերտ բարեկամութիւն սէր և միաբանութիւն կը հաստատուի. դուք ալ անոնք ալ հանգիստ և խաղաղ կը մնաք, ինչպէս որ հարկ է կրօնականներուն, որք հասարակաց հայելի են, և սիրոյ և միաբանութեօրինակ, և այլն ։ ։

Սիրելի ընթերցողք ի հարկէ կը զգան որ այն նոր եկած հրամանը Հայոց Պատրիարքին սպասած փրկարար հրամանը չէ. Հայոց միաբանութեան վերալից սրտին ցաւոցն ամօրիչ դեղ մը չէր. այս հրամանով Հայոց՝ օտարաց ազդեցութեամբ բռնաբարուած իրաւունքները ձեռք անցնել անկարելի էր. իւր սեպհականութեան տէր ըլլալու իրաւունքին համաձայն չէր. այլ միայն սիրոյ և միաբանութեան յորդոր, յուսադրութիւններ ապագայի համար. վերջապէս աւելի Վատինաց գերի ըլլալու յորդոր էր. ո՞ր կը մնար ապա Հայոց այսքան դարերէ ի վեր Քարեխնամ Տէրութեան հըր և հօրատակ և հաւատարիմ զաւակ ըլլալը, երբ թոյլատրուի այն անիրաւ յափշտակչին բռնաւոր ճիրաններուն մէջ ճնշուիլ մնալ. և այն իւր արդար իրաւունքը եւ սեպհականութիւնը թշնամին բուռն զօրութեամբ գըլըճը հափքել ինչ իւր աչքին դիմացը խլել և ինքը առանց ճիգ հանելոյ թոյլ տայ անոր. ո՞հ անտանելի ցաւոց զոր ընդունել, կրել և տոկալ անհնարին էր :

Նաեւ կը գուշակուէր այն եղելութիւններէն, որ նոյն երկու վանքերը Հայոց արդար սեպհականութիւնը ըլլալը բարեխնամ Տէրութեան օրինաւ որ կերպիւ հասկցուցած չէին. այսինքն օտար ազգաց հետ հաղորդակցութիւն (Դպրեկոթիւն) բռնաւ չունենալը և Հայոց ազգին սեպհական օտարուածք ըլլալը, ապա թէ ոչ ինչպէս կարելի էր որ մինչեւ ցարդ Հայոց ազգային սեպհականութիւնը այսպէս անիրաւ բռնաբարողներէն բուրովին ազատելու համար գալիք փրկարար հրամանին ուշանալը : Սիւրբ մուշուհմէն էին այնքան դարերէ ի վեր Օսմանեան բոլոր Վահագետաց իսկական կնիքը կրող հրովարտականքովը Հայոց ազգին անկախ և ազատ սեպհական իրաւունքը ըլլալը և ոչ յուժմէքէ կախում ունենալը, և Վատինաց տարին միանգամ նոյն երկու վանուց մէջ պատարագելու թոյլատրութիւնը միայն գթասիրտ Հայոց ազգին կողմանէ շնորհք ըլլալը :

Քրանչիսկեանք այս շնորհքը փոխանակ երախտագէտ մտօք վայելելու, յանուն ամենակարողին, անմահին և ամենեցուն Նորաջին Նստուծոյնը լիրուած սուրբ սեղանոյն վրայ, տկար մահկանացու արարածի և ամենասուխալ մարդոյ մի անունը Վրիստոնէական սուրբ հաւատոյ և սուրբ Մեծ տարանի երկնաւոր վարդապետութեան հոգւոյն հակառակ նորահնար անսխալ տիազուով Հայոց սեպհական սուրբ եկեղեցւոյն մէջ ի լուր ընդհանուր ազգին յիշատակելու համար եղած մեծ պատրաստութիւնները գիտե՞ր արդեօք բարեխնամ Տէրութիւն :

Ի վերջ ամենայնի, ի բնէ Հայոց սեպհական և միակ միութարութիւնը մնացած սուրբ Յակովբ եկեղեցւոյն մէջ Հայոց կրօնքին դէմ քարոզ

տալով (որ երբեք տեսնուած ալ չէր),
 « Հայք հերետիկոս են , Հայք ալ
 « նիծեալ են , քանի որ Հռոմայի փա-
 « փան չեն ընդունիր , անոր չեն հնա-
 « զանդիր , անոր ոտքերուն չեն խո-
 « նարհիր չեն համբուրեր , Հռոմայի
 « ընդհանրական եկեղեցիէն դուրս
 « են , որ վասն արքայութեան երես
 « տեսնալիք չունին , դժխտոց որդիք
 « պիտի ըլլան . մեղք և հաղար ափ-
 « սոս որ այս հոյակապ , դարաւոր
 « և պայծառ եկեղեցին այսպիսի հե-
 « րետիկոսներուն ձեռք մնացեր է »
 ըսելով հաղար և մէկ հայհոյանք և նա-
 խառնիք Հայոց ազգին կարդալնէն
 բարեխնամ Տէրութիւնը լուր ունէր
 արդեօք :

Այս թէ ոչ ի նչպէս կարելի է հա-
 ւատալ թէ, բարեխնամ Տէրութիւնը
 իր սիրելի հպատակ ազգին այսքան
 անտանելի տառապանքները և նախա-
 տինքները թէ իր կրօնքին դէմ , թէ
 իր Ազգութեան և սեպհականութեան
 դէմ քաջած ըլլալը ըսելով խօսոյն իր
 փրկարար հրամանները չփութացներ
 ի փրկութիւն Հայոց իրաւանց :

Եւ ահա զինի այսպէս սրտամաշ
 մտատանջութիւն մէջ , Սրբազան Պատ-
 րիարքն նոյն եկած հրամանին համե-
 մատ տրուելիք պատասխանն արդէն
 պատրաստած և զրկելու վրայ էր ,
 համարէ թէ ճիշտ նոյն միջոցին սուրբ
 քաղաքիս Սեմ . Սուլթանարուֆ
 Պէյը Նորին Սրբազնութեան քով
 տեսութեան եկաւ :

Սոյն խնդրոյն վրայօք անմիջապէս
 խօսք բացուելով , Սրբազան Պատրի-
 արքն ըսաւ . « Սուլթանարուֆ Պէյ ,
 այս ինչ լուրեր և հրամաններ կը հա-
 ղորդէք մեզ , մենք մեր բարեխնամ
 թագաւորէն մեր ցաւօցը դեղկտալա-
 սենք , մեր արդար իրաւանց և սեպ-
 հականութեան ազատութիւն , օտար

ազգեցութեանց երեսէն ծագած կըն-
 ճիւններուն լուծումն . միթէ Չեր
 Սեմութիւնն ականատես չէք հոս
 խառնաց անիրաւ արարքներուն և
 պահանջմանքներուն . եթէ տակաւին
 ի . Գուռը և ձեր Սեմութիւնն
 լուրք , բարերը պիտի ազաղակեն :

« Սեմութիւն մեր բարեխնամ թագաւոր ,
 ըր իւր սիրելի հպատակ Հայոց ազ-
 գին ընդհանրութեմ սեպհական եղող
 սուրբ Յակովբայ վանուց բացալ՝ ձեռն
 իրաւունքը կ'ուզէ որ կորսուի , և զա-
 նկիայ խառնաց կամայը զմի պիտի
 ընէ , կամ իւր սիրելի հպատակը խա-
 տինաց ձեռքը դերմ պիտի ձգէ , ես
 երբեք չեմ կրնար խառնաց այսպէս
 անիրաւ պահանջմանց զիջանել և իմ
 սիրելի ազգիս ընդհանրութեան սեպ-
 հականութեանէն , որ այսքան դարերէ
 ի վեր իւր ստացուածքն է , փոքրիկ
 քար մի անգամ չեմ կրնար կորսնցը-
 նել . միթէ այսքան ստրկացաւ Հայոց
 ազգը իր բարեխնամ թագաւորին աչ-
 քին , միթէ հաւատարիմ և ամենայն
 պարագայից մէջ ազգովին հնազանդ
 և հլու ըլլալինս մեզի յանցանք եղած
 է , կ'աղաչեմ այս կտորները ինձ բա-
 ցատրեցէք : » Այս խօսքերը արտասա-
 նած ատեն Սրբազան Պատրիարքին
 աչքերէն արտասուաց կաթիլներ ըս-
 կան հոսիլ . որ վասն բաւական ըս-
 փոփելի խօսքեր խօսիլ պարտաւորե-
 ցաւ Սեմ Սուլթանարուֆ Պէյը :
 Նաև յաւելցուց ասելով թէ « Բաթ-
 րիքէֆէնտիկոսալ յատկապէս այս բա-
 նին համար եկայ ձեր քովը , թէ և ձեր
 ըրած այցելութիւն փոխարէն ալ գա-
 լու պարտաւորութիւն ունենալը դի-
 տեմ , բայց այն թողումք այլեւմ պա-
 հու , վասն զի այս ստիպողական է .
 յատուկ եկած եմ ըսաւ Նորին Սե-
 մութիւնն , որ զձեզ եթէ կարելի է ,
 համոզեմ որ մարդասիրութեամբ նե-

ըէք Վատինաց, և քանի որ նոյն շնորհքը այսքան ատեն ըրած էք, և անոնք ալ վայելած են, դարձեալ ձեր մարդասիրութիւնը ցոյց տուէք, թող գան դարձեալ իրենց պաշտօնը կատարեն, թէ և ինչպէս գրտէ 'ի դուրս լսած եմ որ անոնք զձեզ քանի մը պատճառներով վշտացուցած են, նա մանաւանդ ձեր սեպհականութեան իրաւանց դպած են, և ձեր տեղերէն քանի մը տեղեր յափշտակած են, դուք այս անգամ ալ անոնց ներողամիտ եղիք. թող Տէրութեան գլխացաւին մէկը պակսի. ես ձեր միւս կորուսած բոլոր իրաւունքները հետզհետէ կը գրեմ կ'իմացնեմ առ Վ. Ղուբ և որքան կարելի է, կ'աշխատիմ ձեր մէջը գտնելու հաշտեցնելու և բոլոր իրաւունքնիդ տեղը բերելու. Ղուբ այնպէս գիտնալու էք և կը յուսամ որ քաջ գիտէք, թէ Տէրութեան փեսայը ձերն է, և ձեր փեսայը Տէրութեան է. քանի որ դուք Տէրութեան հաւատարիմ և հնազանդ հպատակն էք. Եւ դարձեալ Վատինաց ալ բոլոր պէտք եղածը կ'ըսեմ, որ անոնք ալ այսուհետեւ զձեզ ցաւցնելու առիթներէն հեռանան, ձեր իրաւունքներէն յափշտակածնին ետ դարձնեն, նոր 'ի նորոյ իրաւունք յափշտակելէ դադրին. իրենց արարողութիւնը կատարելու համար եկած աւտեննին ամենայն պարկեշտութեամբ վարուին. սովորականէն աւելի բաներ ընելով ձեր սեպհական իրաւունքին չը դպչին, և կը յուսամ որ այս այսպէս ըլլալէ ետքը, միշտ սիրով սլիտի մնաք և անհամաձայնութիւններ հանելու առիթները կը պակսին. դուք ալ հանգիստ կը մնաք: —

«Սեծապէս շնորհակալ եմ Վսեմափայլ Պէյ, ըսաւ Սրբազան Պատրիարքը, ձեր բարեմտաբար խօսած

խրատներէն, և իմ բնական պարտաւորութիւնս ալ նոյնը կը սորվեցնէ ինձ. այլ ցաւօք սրտի կը յայտնեմ, որ արդէն այդ պարտաւորութիւնը լիովին կատարած եմ, և Վստուած գիտէ որ 'իսկ որ Վրիստոնէական, ինչ որ մարգկոյին օրէնքները կը սորվեցընեն և կը պարտաւորեն, ձեր կարողութեան համեմատ կատարած եմք. բայց ինչ օգուտ որ մենք որքան մարդասիրաբար վարուեցանք, որքան պատիւ ըրինք և իրենց պատիւը պահեցինք, անոնք մեզի միշտ փնտախք փոխորինեցին. և սկսան իրենց բոլոր ճիշդ թափելով աւելի մեծամեծ վընասներ տալու ձեռնարկել. կարծելով թէ իրենց խորգախ ընթանցքները մենք չենք գիտեր. իրենց տուած փնասներն և բրած և ընելիք յափշտակութիւններն այն աստիճան ըզգալի եղած է այսօր Հայոց միաբանութեան և ընդհանուր Վըգին, որ եթէ գիտնամք թէ սուրբ Յակովբայ վանքը մեր ձեռքէն բոլորովին պիտի ելլէ, զոր Տէր մի արատցէ, աւելի լաւ կը համարեմք նոյն սուրբ Յակովբայ վանքը կորսնցնել, քան թէ այնպէս մեր Վըգին, կրօնքին և միանգամայն սեպհականութեան թշնամիին մեր սուրբ եկեղեցւոյն մէջ պատարագելուն թոյլատրել:

«Վստ մարգիկները այսքան չարիք հասցնելով և մեր արդար իրաւունքները յափշտակելով՝ ոչ թէ միայն գոհ չեղան մեզմէ, այլ և իրենց խելքովը կարծեցին որ մենք իրենցմէ կը վախնամք և իրենց յափշտակած և յափշտակել ուղած տեղերուն յարգը և պատիւը չենք ճանչեր. և եթէ հարկը պահանջէ առեան ելլալ, նոյն տեղերուն համար դատ վարել, խօսիլ իսկ չեմք գիտեր. վասն որոյ օր ըստ օրէ սկսան համարէ թէ բուռն զօ-

բուժեամբ Գլխը՝ Կապը Ինչև ըսելով
Տէրութեան անդէն հպատակաց վրայ
յարձակել . այն այնպիսի անխնայ
կերպիւ զոր եթէ մարդ նկատողու
թեան առնէ , անշուշտ առանց տա
րակուսելու կը կարծէ որ այս սուրբ
քաղաքը մարդկային սեռին բնական
երկրագնդէն բոլորովին դուրս առան
ձին սրոշեալ երկիր մ' է , ուր ոչ տէ
րութիւն կայ և ոչ Տէրութեան մը
հսկողութիւն տակն է : Քրանչիսկեանք
երբ տեղ մը յափշտակել ուզեն , նախ
բնաբանը սիրոյ վրայ հիմնելով , բա
րեկամաբար կը սկսին , որով մինչեւ
յերկիր կը խոնարհին , եթէ այնու
չկարացին իրենց բաղձանքին հասնել ,
սպառնալիքներ տեղացիներ կ'ըսկսին
յանուն օտար Տէրութեանց ազդե
ցութեանց , և եթէ այնու եւս չկու
րողացան յառաջ տանել , ալ ըստ կար
գի կըսկսին նախ դաթօլի գօնցօլնե
րուն ձեռք տեղւոյս կուսակալը կամ
համոզել որ և իցէ կերպիւ , կամ
վախցնել . ապա դեռսպանոյ ձեռք
Ի . Դուռը ձեռք կ'առնեն և այն առ
ախ ճաննոր մինչեւ բարեխնամ Տէրու
թիւնն կըստիպուի իրեն անմեղ , հը
լու և հնազանդ սիրելի հպատակին
արդար և սեպհական իրաւանց դէմ
հրամաններ տալ , և ստիպել զինքը որ
ընդունի տրուած հրամաններն , և ի
րեն արդար իրաւունքները կամայ ա
կամայ կորսնցնել յանձն առնու : ի՞նչ
անմեղ և ակամայ սպանութեան երբ
վերոյիշեալ եղանակներով չկարողա
ցան իրենց յափշտակիչ նպատակնուն
հասնել , ալ գործերը ուրիշ կերպա
րանք կ'առնուն . մէկ մ' ալ կը նայիս
որ Քրիստոսի Տեառն մերոյ սուրբ
սրտու իրանացն համեմատ հեզ և խռ
նարհ ըլլալու պարտաւորեալ և բոլ
րով սրտիւ ուխտեալ անսխալ կար
ծուած պապական եկեղեցւոյ պաշ

տօնեայներն բոլորովին կաղմ և պատ
րաստ , բռնութիւնը ձեռք առած
յանկարծ իրենց այն կրօնական պար
կեշտութեան տիպար եղող զգես
տուց տակէն կուռի վերաբերեալ որ
և իցէ գործիքներ դուրս հանելնին
և անմիջապէս յարձակելնին մէկ կ'ըլ
լայ անմեղ և անզէն ազգին միաբա
նութեանը վրայ , և այն տասնապա
տիկ մարդկան առաւելութեամբ , իբ
րեւ խաչակիր զօրք կարծես որ սուրբ
երկիրը աղատել կը ճգնին , չեմ գի
տեր թէ որ Տէրութեան ձեռքէն , և
կըսկսին զարնել խորտակել փշրել ինչ
որ իրենց դիմացը կ'ելլէ , ինչ որ ի
րենց աչքը կը տեսնէ , ինչ որ իրենց
ձեռքը կ'իյնայ անխնայ , մինչև սուրբ
եկեղեցւոյ Վստուածայնպաշտամանց
վերաբերեալ զարդերն և սուրբ ըս
տաններն և անթմներն . առաւել ող
բալին այն'է , որ ամենայն Քրիստոնէից
սիրելին և երկրպագելին (1) անգամ
ոտնակոխ ընելով կըխորտակեն կըթա
փեն : Իսկ Տէր իմ , իմ միաբանու
թիւնս ոչ զէնք ունի և ոչ ալ այդ
պէս կրօնամոլ մարդիկներ են . և ոչ
երբէք ալ զինուց կարօտութիւն ու
նիմք մեր իրաւունքները պահպանե
լու համար . իմ զօրքս և զօրականս ,
եւ զէնքերս նախ իմ արդար իրա
ւունքս է . երկրորդ՝ Տէրութեանս
արդար դատաստանն , որ կը յաղթ
ամեն զինուց և զօրութեանց : Եթէ
լատինք իրաւամբ կ'ուզեն ինձմէ իմ
սուրբ Յակովբայ եկեղեցիս գալու
Թյւլատրութիւնն , թող հանեն իրենց

(1) Շատ տարի չէ՛ Ս . Յարութեան տաճարի
մէջ , Գիւտ խաչ ըստած տեղը , Վատին կրօնաւո
րին մէկը Հայոց հոն դրած արծաթեայ խաչը , որու
մէջ կը պարունակէր կենաց ճոյսէն մաս մի , յա
փշտակելով գետին կը զարնէ ու ոտնակոխ կ'ընէ ,
զոր Հայ միաբանք ըսելով կը գիտնէ ու հազիւ թէ
գետնէն կը թողնեն սուրբ խաչը որ բոլոր քրիստո
նէից երկրպագելի է :

հրովարտակն, իրենց հեօճէլն կամ ար-
տօնագրերն, եթէ ունին. և ինչո՞ւ
անցեալ տարի այնքան քննութեան ա-
տեն չյայտնեցին և չկարողացան գօնէ
մատնաչափ թուղթ մի ցոյց տալ. ուր
ամեն կողմանէ իրենց իրաւունք չու-
նենալը արեւի նման յայտնուեցաւ.
մինչդեռ իրենք կ'ըսէին թէ սուրբ
Յակովբայ վանքը իրենց է, և Հայոց
Լճգին տուեր են, և տարին մի ան-
գամ պատարագ ընելը նշան դրած են,
որ երբ ուզեն ետ առնեն: Ո՛վ զար-
մանալի փաստիս, որուն հաւատարու
համար մարդ անխելք ըլլալու է:

Եւ այն միայն Ռաֆայէի տեղերուն
համար է, ուր երեք ազգէն և ոչ մէկը
առանձին բեւեռ մի անգամ չկրնար
գամել. և ոչ թէ՛ Հայոց 'ի բնէ իւր
սեպհական ունեցած ազգային վանքին
համար է այդ Ռաֆայէի բառը. ոչ
Հայոց վանքերը, և ոչ միւս ազգաց
ունեցած առանձին վանքերը պայմա-
նին տակ մտած են:

Եթէ ամեն ազգ իրենց առանձին
ունեցած սեպհական վանքերը մէջ

տեղ բերելով ամենայն սիրով Ռաֆա-
էի կ'ընեն, թող սկսին նախ միւս բը-
րիստոնեայ եղբայրները, երբ կարգը
մեզի գայ, այն ատեն կը մտածեմք կը
պատասխանեմք իրենց. ապա թէ ոչ
այնպէս խօսքով Ռաֆայէի է ըսելով,
Բ. Պուռն անգամ խաբելով հրաման-
ներ բերել տալով Հայոց 'ի բնէ անտի
(Օսմանեան վեհապետաց այնքան ար-
քունագործմ հրովարտակներով, ա-
ռանձնաշնորհներով, իմ թիպներով
հաստատուած ազատ և անկախ սեպ-
հականութիւնն և ընդ հանուր ազգին
արեան գին եղող սուրբ Յակովբայ
վանքը չկրնար Ռաֆայէի տեղերուն
կարգը դրուիլ. Հայոց Պատրիարքը
այդ չկրնար ընել եթէ մահ անգամ
սպառնան իւր անձին, վասն զի՝ լաւ է
քաջութեամբ մեռնիլ, քան վատ ա-
նունով ապրիլ:

Սուրբ Երուսաղէմէն ճոքան հե-
ռի է, ըսաւ՝ Եօրին Վսեմութիւնը,
Սար Եագուպ կոչուած վանքը, որ մը
կ'ուզեմ երթալ տեսնել և պտրտիլ:
(Շարունակում է)

Բ Ա Ն

ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌ ՔՐԻՍՏՈՍԱՆՈՒԵՐ ՆՈՐԱՆԾԱՅՍ

ԲՆԻ կամարաւ աստուածային անդ տաճարին տերունական,
Ուր Ենմահին բարձրացաւ Խաչ, 'ի փրկութիւն սղգի մարդկան.
Եյս անգանօր թռչէր բարբառ սրտէ 'ի սիրտ անդ լինէր լու,
«Ո՛վ որդեակք իմ, յուսոյ որդեակք, ձօնիք Խաչին դուք կենսատու»
— Հայր, Քրիստոսի այս եմք ձօն,
Եյս է մեր բան աստ 'ի Սիօն:

«Եւ Քրիստոսի որ նըւիրեալ պարտի, գիտէք, ունել սիրտ վեհ,
Օ՛ի կարացէ տոկալ վշտաց անագորոյն բազդին նըսէհ.
Ո՛վ որդեակք իմ, դուք լուտանաց կամ անիծից շանթից անհուն

Կարէք տանիլ. ՚ի Վրխատոսի կամ ՚ի յայսն կարէք մնալ միշտ հաստատուն,
— Հայր, Վրխատոսի եմք մեք նըւէր. »
Տանիմք այս, նորին առ սէր :

« Այլ թէ, բաբէ, ամբարշտին ձեռք անողորմ ՚ի բոց, ՚ի հուր
Գատել ըզձեզ, կամ հուսկ ապա նա ժպհրեացի մաշել ՚ի սուր .
Աստուածասէր որդեակք իմ, դուք ուխտաւոր որդեակք Խաչին,
Յայնժամ ձեր զննչ լիցի բարբառ կամ անդանօր բան սրտագին : »

— Հայր, Վրխատոսի եմք պատարագ,
Այս լիցի անդ մեր աղաղակ :

« Այլ թէ ցաւոց յայն վերջին պահ, կամ դառնագին յայն յետին կէտ
Յոր կողիողեալ անկանիցիք, յետ ձաղանաց տարեալ յաւէտ .
Դուք սրբութեան ձօնքդ նորննծայ, դուք իմ որդեակք քրիստոսանուէր
Օրնն անդ լիցի ձեր սրտի ձայն, առ Տէր Փրկիչ և Աստուած մեր : »

— Վառ ՚ի քո սուրբ սէր սրտայրեաց,
Դո՛ւ մեռանիմք, Յիսուս Աստուած :

« Այս է ահա Խաչին ուղի, այս ճանապարհ նեղ և անձուկ,
Ուր փուշք վշտաց աղբի աղբի տան վեհերոտ սրտից տաղտուկ .
Իսկ մահացու արի սրտից, այս միայն է ռահ երկնային,
Ինդ այս թռչին միշտ խնդութեամբ արդար ոգիք ՚ի վեր յերկին : »

— Հայր, ջան ՚ի սիրտ յԱստուած վստահ
Խոստանամք մեք յայդ գընալ ռահ :

« Իւր երանի յայնժամ բբացս՝ երբ ձեր տեսից մեծ յաղթանակ,
Վառ ՚ի նախնն Փրկին փառաց արդարութեան կայք նահատակ .
Սե՛ծ ասացից ծընաւ զաւակ, մե՛ծ արդարեւ, Սիօն մեր մայր,
Դուք Սիօնիս զաւակք շնորհաց, օրհնեալ կացիք դուք յամն յամայր : »

— Այս դու օրհնեալ Հայր պատուական,
Չօնողդ ըզմեզ ճշմարտութեան :

« Հայաստանեայց միակ սարձանք թէ լիցիք դուք, ով իմ որդեակք,
Ի ձեր ՚ի գլուխ տեղայցեն, ո՛հ, յայնժամ անշուշտ փառաց պսակըք .
Թէ սիրիցէք դուք հեգ զորդիմ՝ մեր հայրենեաց մօրն Հայաստան,
Երանիցիք դուք յաւիտեան յերախտագէտ չրթանց Հայկեան : »

— Հայր, հայրենեաց սիրել զորդիս,
Այդ լիցի ուխտ և մեր սրտից :

« Աստուածն ուրեմն, զոր միշտ ծանեան հարք մեր և հաւք,
Աստուածն Հայկայ,

Վրկայ թող նա լիցի միայն ձերը բանից, ուխտիցդ վըկայ .
Նա թող լիցի ձեզ յայս միակ, և ապաւեն ՚ի փորձութեան,
Օր մի անկեալ ՚ի հաղը չարին աղբին լիցիք դուք չար սատան : »

— Հայր, այժմէն երդնումք մի այդ բնաւ,
Յուսամք յԱստուած, քաւ լիցի, քաւ :

Հաղիւ ելին բանքս ՚ի չրթանց նորննծայիցն քրիստոսեան,
Ետն եկաց Հայաստանեայց մեծ Հայրապետն պատուական .

Ըստ անդէն անդ ել ՚ի շրթանցն . « Քրքաղըրս լուծ առնմբ փրկէին ,
 Պուք որդեակք իմ , յօժար սրաիւ զինուոր լինէք սրբոյ խաչին : »
 — Հայր , փրկէին եմք ձօնք յաւիտեան ,
 Օպոս մեր վերջին ընկալ դու բան :
 Բնդ այս անդէն Հայրապետին բիրք աստուածեան պիշ ՚ի սուրբ խաչ
 Նախ սրտագինս մնջեալ աղօթս , հուսկ կարկառէր զիւր օրհնեալ Աջ .
 « Ես դնեմ ձեռս ՚ի վերայ ձեր , զինուորքդ ազնիւ փրկէին փառաց ,
 Քրիստոսի էք յայսրմ հետէ դուք խաչակիր զաւակք շնորհաց : »
 — Այք Քրիստոսի եմք ձօնք յաւէտ ,
 Հայաստանեայցս նլ Հայրապետ :
 Ըսաց , օրհնեաց . . . Յաւիտենին ահա անդ էն ՚ի բարձրութեն ՚ի խորան
 Եւ բարձրացաւ նորընծայիցն այս լուռ մրմուռնջ , այս ուխտի բան :
 « Ո՛վ որդեակք իմ , ձայնէր Ըստուած , արքայութեան դուք ժառանգորդ ,
 Ընմահական եւ փառացն իմ վստահ լերուք՝ լիջիք հաղորդ : »
 — Բանդի դու այդ ետուր մեզ յոյս ,
 Ո՛վ Փրկիչ մեր ե Տէր Յիսուս :

ՂԵՐՈՒՍԱՂԷՏ
 1871 Յուլի 18

Ս. Կարապետ
 Տ. Սիմեոն :

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

Պօլէ . Ըս Պ . Ս . Պ . Չեր նամու
 կաւ կը դանդաւորէր ազգային լրա-
 դրութեան ընդդիմախօս ու հակա-
 պատկեր վիճակէն . եւ Չեր փաստերը
 զգալի օրինակաւ տապալուցանելու
 համար կը գրէք թէ . « Սինդգեռ մի
 կողմէն Սիւն եւ Լրե-Ելեան Սամու-Լյու-
 նական մոլեկրօնութիւնը կը դատա-
 պարտեն եւ Սամիս կը ձայնակցի , Սիւնի
 ամբողջ յօգուածը հրատարակելով .
 միւս կողմէն Երջալոյ կ'ընդդիմաբանէ
 եւ Լրե-Ելեան Սամիս ազգասիրական ու
 գեղն դէմ յարձակելով , թեթեւա-
 մտաբար յայտարարութիւն կ'ընէ իւր
 914 թուով թէ՛ Յոյները թեր թե՛ եղբայր-
 ներն են . թե՛ Բուլղարիէն ինքն թե՛ Լրե-Ե-
 լեան Սամիս խօսքերը :

Ինչո՞ւ կը ցաւիք , Սեփարդոյ բա-
 րեկամ : Երջալոյ որչափ որ իւր յայ-
 տարարութիւնը Օմիւռնիոյ Հայ հա-
 տորակութեան ձայն կը համարի , ըն-
 թերցող մի չըկայ որ այդ բանին հա-
 ւատայ , ուրեմն իւր յայտարարու-
 թիւնը իւր յատուկ համադրումն եւ լսկ
 իւր անձնական խոստովանութիւնն է .
 ուստի ամենեւին պիտի չըզսրմանաք
 եթէ Երջալոյ կրտսեր Յոյն մի ճա-
 նաչելով զինքն՝ Յոյն թե՛ եղբայրներ
 ունենայ : Այս մասին երբէք վշտանա-
 լու եւ դանդաւորու չէ . այլ մանա-
 ւանդ շնորհակալ լինելու է Երջալոյն ,
 որ իւր կոչումը որ մինչեւ ցայսօր ան-
 յայտ էր մեզ ինքն ամենայն պար-
 զախօսութեամբ կը յայտնէ ՚ի լուր
 ամենեցուն , որով կ'իմանամք թէ՛
 Հայոց մէջ երիցագոյն կարծուած Բա-
 դրապետը՝ Կրտսերագոյն Յոյն մի եղած է :
 Ուրեմն ներեցէք մեզ որ փոխանակ

ձեր ընդարձակ նամակը տպագրելու Սթի մէջ , բաւական կը համարինք սոյն երկու տող պատասխանը հրատարակել :

— Պօլ . Լ . Պ . Լ . Բ : Լ . յս երկրորդ անգամն է , որ բարեկամութիւն կ'ըստիպէք մեզ՝ Օրագրի և Սանկտ-Պետերսբուրգի վիճաբանութեանց մասին մեր կարծիքը հրատարակել Սթի միջոցաւ : Ներեցէք մեզ որ կարող չենք Ձեր առաջարկութիւնը ընդունիլ , վասն զի թէ և ցաւ է մեզ տեսնել , որ երկու լրագիրներ երկար ժամանակէն 'ի վեր ըստ ամենայնի անձնական հակառակութեան , քան թէ շահաւէտ վիճաբանութեան զոհած են իրենց էջերը . բայց մենք՝ փոխանակ քննադատելու , աւելի լաւ կը համարիմք թողուլ մինչեւ որ իրենք զգան անձնական վիճաբանութեան անտեղուծութիւնները և փորձով համոզուելով՝ ուսանին խիստպէս վիճաբանիլ քան թէ նախատել , այսպէս , անուանարկել և հայհոյել :

Իերո . Լ . Պ . Վ . Կ : Շարունակ կը գրէք՝ թէ ինչո՞ւ չհրատարակեցինք մինչեւ ցայսօր տեղդ պատահած գողութեան տեղեկագիրը և Տերութեան դատարանի մէջ կատարուած քննութեան արձանագրութեց պատճէնները , զորս զրկած էիք մեզ : Իսկ ի՞նչ հարկ կայ հրատարակութե , քանի որ ճշմարտութիւնը ինքնին երեւան ելած է , գողը , 15 օրեայ քննութենէն զինի , բռնուած է և այն մարդիկը , որոնք կը ջանային վանքի առունը արատաւորել , ինքնին ամօթահար եղած են : Ինչի մեջ անդէպ չէ՞ յաղթանակէն զինի՝ խաղառ ոտնակոխ առնել պարտաւրդ : Լ . յսպիսի պարագաներուն մէջ աւելի լաւ է վեհանձնաբար ներել քան թէ հրապարակ հանել այն ճարտարահար իրողութիւն

ները , որով տքնեցան ոմանք վանքի առունը բծաւորել և ինքնին խայտառակ եղան : Լ . մեն բանին ժամկայ և ժամանակ , քանի որ պարտեցող կողմէն հրապարակական ընդդիմաբանութիւն չերեւիր , լռելն աւելի վայելուչ է :

Դամասկոս . Լ . Պ . Լ . Յ . և Պ . Խ . Պ : Ձեր զրկած Հայերէն և Երաբերէն երկու ընդարձակ յօդուածները ընդունեցինք , յորոց առաջինը ձեր շարագրութիւնն է , իսկ երկրորդը տեղեկութեան լրագրական Երաբարաց ընկերութեան : Երաջնոյն մէջ երկու գրադուհայ երիտասարդներ են , որ կը բողոքեն յունական մոլեկրօնութեան դէմ : Իսկ երկրորդին մէջ յոյն ընկերութիւն մ' է , որ կը նկարագրէ տեղեկյն յունաց պատրիարքարանի զեղծումները և նոյն ընկերութեան դէմ յարուցած հալածանքները : Հայերէն յօդուածը , թէ և գեղեցիկ , առ այժմ չենք ուղեր հրատարակել , ուստի և ձեր ներողամտութիւնը կը խնդրեմք : Իսկ Երաբերէնը՝ որ խիստ աղքատ է և հիմաւոր , ամբողջապէս հրատարակել տարագէտ կը համարիմք , այլ միայն իւր պարունակութեան պատմական խիստ համառօտ հայերէն թարգմանութիւնը կը ներկայացնենք ընթերցողաց , որպէս զի իւրաքանչիւր որ տեսնէ՝ թէ ի՞նչ քան թշուառ է յունագգի կղերը , որ իւր ծայրայեղ զեղծումները անտեսութեան տալով՝ Երթնայի Սեբեթիոս եպիսկոպոսի եկեղեցական պատմութիւնը Երաբերէն թարգմանութիւնը կը հրատարակէ (որուն մէջ մոլեգին աւտելութեամբ Հայոց դաւանութիւնը հայհոյուած է ,) և իբրեւ դասական գիրք դպրոցական անմեղ մանկանց ձեռքը կուտայ , նոցա սիրտը և միտքը , մանկական հասակէն ատելութեան և մոլեռանդութեան մէջ կը թելու և

վարժեցու համարս [հայոյն ընկերու-
թեան յօդուածոյն պատմական հա-
կիրճ բովանդակութիւնը :

« Դամասկոսի մէջ մէկ քանի յոյն
անձինք աղքատասիրական ընկերու-
թիւն մը կը հաստատեն այնպիսեաց
օգնութեան համար , որը շատ գի-
շերներ հանդերձ ընտանեօք անօթի
կ'անցընեն , գարիի հաց անգամ ձեռ-
քերնին չանցնիր [հաջին անգամ յու-
նաց պատրիարքարանը հաճութիւն չի
տար . Սերաֆիմ անուն (փոխանորդ)
եպիսկոպոսն ալ արգիլել կ'աշխատի ,
բայց չի յաջողիր , այլ ինքն ալ հաճու-
թիւն կուտայ : Դամասկէ մը վեր-
ջը յետագայ գործը կը պատահի 1864ին
դամասկացի 'Նիկօլա Կալամ' անու-
նով երիտասարդ մի 'Նիկօլա իլ' Սուլտան
անուն մէկուն աղջկան հետ կը պսա-
կուի : Սէկ տարի ե ութ տմիս սիրով
առանց խռովութեան կենալէն ետքը ,
աղջիկը հօրը տունը կը փախչի , բսե-
լով թէ . « ինքն , երկունք հօրը հետ 'ի
միասին , չուզէր բնակիլ [յս պատճա-
ռաւ երկը ուրիշ տուն կը վարձէ ,
բայց անօգուտ , վասն զի այն տեղէն
ալ մէկ քանի անգամ ոչինչ պատճառ-
ներով կը փախչի ե միշտ ետ կը դառ-
նայ : Սերժապէս յիշեալ կինը , գիշեր
մը , հօրը , մօրը ե երկու քահանանե-
րու հետ (որոց անուանքն են , տէր
Իուհաննա — իլ — Թափի ե տէր Էան
Լպտ — իլ — հատ) կերթայ Էան Շամիէ
անուն 70 տարեկան մէկու մը հետ
կը պսակուի , մինչդեռ յիշեալ Պօ-
լիս օրինաւոր ե հաւատարիմ կին մի
ունի : Դողմուրդը , այս եղելութիւ-
նը իմանալով , պատրիարքարան մարդ-
կը զըկէ այս գործին վրայօք տեղեկու-
թիւն ստանալու ե ինչ պատճառաւ
ըլլալ իմանալու համար : Նորին Լ-
մեն . Սրբազնութիւնը հինգ օր միջոց
կ'որոշէ պատասխան տալու : Որոշեալ

օրը կը հասնի , բայց ամենեւին պա-
տասխան մը չելար , ուստի Ժողովուրդ
դը խռռն բաղմութեամբ աղաղա-
կելով պատրիարքարան կը մտնէ , նոյն
միջոցին կինը առնուած ժողուն հայրը
թուղթ մի կու տայ Պատրիարքին , ու
բով այս գործին պատճառը ե թէ ո՞ր
օրէնքով եղած ըլլալը գրութեամբ իւ
մանալ կ'ուզէր : (1870 , օգոս . 8 :)

'Նորին սրբազնութիւնը թուղթը
կարդալով ե Ժողովուրդեան խռովու-
թիւնը տեսնելով , կինը իր առջի մար-
դուն դարձնել կ'ուզէ , բայց տղուն
հայրը այս խօսքը կըսէ . « Եթէ օրէն-
քը կը հրամայէ : » Լյն առեն Պատ-
րիարքը այս գործին մեղօք ըլլալը կը
խոստովանի ե յիշեալ Սերաֆիմ ե-
պիսկոպոսը իր փոխանորդութե պաշ-
տօնէն հանել , ե քահանաները եկե-
ղեցւոյ պաշտօնէն արգիլել ե Էան
Շամիէի , 'Նիկօլա Կալամին հարսա-
նեաց բոլոր ծախքը վճարել տալ կը
խոստանայ : Լյսու ամենայնիւ խոս-
տացածէն ե ոչ մէկը կը կատարէ , ուս-
տի Ժողովուրդը կրկին կը խռովի ե
Պատրիարքարան կը դիմէ : Մինչդեռ
հոն նստած կը խորհրդակցին , պսա-
կող քահանաներէն մէկը մէջ տեղը կը
կայնի ե այսպէս կըսէ . « Ես իմ յան-
ցաւոր ե պատժոյ արժանի ըլլալ կը
խոստովանիմ , սակայն պէտք է որ նախ
եպիսկոպոսը պատժուի , վասն զի այս
պսակին համար 13 ոսկի առնողը ինքն
է , ասկէ 'ի զատ պսակի թուղթի հա-
մար ալ ոսկի մը : Լյս խօսքէն Ժողո-
վուրդը աւելի կը բորբոքի ե նոյն ե-
պիսկոպոսը իր պաշտօնէն հանել կը
խնդրէ : Բայց իրենց ականջ դնող
չըլլար : Սերժապէս մէկ քանի օրէն
յետոյ Պատրիարքը թուղթի մը վրայ
ըստ Եռնաց Թագաւորներուն կա-
նոնին ե ըստ Եովհանն ոսկեբերանի
48րդ գլխոյն իբր թէ այս գործին ան-

մեղըլայը կը հաստատէ : Իսկ ժողովուրդը այս փաստերով գոհ չըլլար :— Պատրիարքարանը այս չափով չը բաւարանանայով, հետեւեալ օրը (17 սեպ. 1870) չորս հոգի Տերութեան կը զըկէ իբր մեծ յանցաւոր բանտ դընելու համար : Եւաջնայն յանցանք կը դնէ, որ վերոյիշեալ Բնկերութեան հաստատութեան մեծ օգուտները բաժնէ և այս անկանոն սլափին մասին արդարութիւնը երեւան հանել ջանացած, զոր Պատրիարքարանը ծածկել կ'ուզէր : Եւրոպայի յանցանք կը դնէ, որովհետեւ ամեն պարագայի մէջ արդարութիւնը պաշտպանած է : Եւրոպայի յանցանք կը դնէ, որ կը բողոքէր Հոլմս ըստած քաղաքի բնակիչներէն ութսուն տարեկան և թողնելու տէր մէկուն դէմ, որ իր կնոջ ստակ տալով խաբած էր և եղբայրութիւն հաստատած : Եւ յետոյ հարստութեամբ ուրիշ աղջկան մը սիրտը շահելով գիւղի քահանայի մը միջոցաւ գողտի անոր հետ պսակուած էր : Քաղաքացիք աղջիկը կը խնդրեն, Պատրիարքարանը զայն Իսլամասկոս բերել կուտայ և մէկու մը քով կը պահէ, բայց յետոյ իր թելադրութեամբ կը փախցնէ : Եւս եղելութիւնը յայտնուած ժամանակ քահանան և պսակուողը կը փախչին, և երրորդ կարծեցեալ յանցաւորն էր որ միշտ կ'աշխատէր աղջիկն ետ դարձնել տալ, քանի որ ապօրինաւոր էր պսակը և քահանան անպատիւ չը թողուլ, բայց քահանային տուած ստակը յաղթեց : Պատրիարքարանն ալ քաղաքացիներէն բաւական մեծ գումար մը կ'առնէ, բայց բան մ'ալ չկատարեր :— Չորրորդին յանցանքն այն էր, որ երեք տարի առաջ այլ և այլ պատճառներով իւր կինը կը թողու, որուն յիշեալ Սերաֆիմ եպիսկոպոսը

և աւագ ոսրկաւագ մը բռնի արձակման թուղթ կուտան, և կինը ուրիշ մը հետ կը պսակեն 27 ոսկի առնելով : Յիշեալ անձը տեսնելով որ Պատրիարքարանը ամուսնական գործերով զբաղած է, աղերսագիր մը կը մատուցանէ իր դատը տեսնելու, և ասով բանտարկուելու կ'արժանանայ :

Եւ այս է բանտարկելոց յանցանքը : Յիշեալ անձինքը միայն 24 ժամ բանտը կը մնան, և յետոյ Պատրիարքարանը հանել կուտայ ամենայն անպատուութեամբ և անարգանք, ընդունելով արդարութեան և իրաւանց ձայնը : Դ

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՆՔ

Քաղաքիս Եւստրիացոց հիւպատոսարանի փոխ-հիւպատոս մեր հայ ազգի Սեմ. Պողոս Ե. Սուրբաթանը Սթանիսլաւի երրորդ աստիճանի պատուանշանը ստացաւ Ռուսիոյ Տերութենէն, Խրիմի պատերազմին ժամանակ՝ տեղւոյս Ռուս հպատակները Եւստրիացոց հիւպատոսարանի հովանաւորութե տակ խնամով պաշտպանելուն համար : Եւս վարձատրութիւնը խիստ ուրախալի է ինչպէս մեզ, նոյնպէս և անշուշտ ամեն մեր ազգայնոց համար, որոնք ի մօտոյ կը ճանաչեն Հայազգի Փոխ-հիւպատոսին ազնիւ հոգին և գովելի տաղանդն ու բնաւորութիւնը :

— [մայիս 6ին] Լատինաց ֆրանչիսկեան միաբանութիւնը կատարեց Եւստրիոյ Կոյսեր ծննդեան տարեդարձը : Եւս պատարագ մատուցին Ս. Յարութե տաճարին մէջ գտնուած լատինական

եկեղեցւոյն մէջ, (ուր ներկայ էին Աւստրիացւոյ հիւպատոսն՝ Պօնտ Պերնար—Տը Կապօդա—Չերվայ, փոխ—հիւպատոս և Թարգման հայադպի Սէծ. Պաքալ Յ. Սուրատեանն) իրենց համադգեստով, փանքի Տեսուչը և Աւստրիոյ բոլոր քրիստոնեայ հը պատակները) և ապա՝ պատարագէն յետոյ, Ս. Յարութեան գերեզմանին վրայ ՚ի կենդանութիւն Կայսեր բարեմաղթութիւն ընելէն զինի, ելան վանուց տանիքը, ուր Տեսուչը ճառ խօսեցաւ և հիւպատոսը պատասխանեց ըստ պատշաճի։ Այս նոյն Տեսուչը երկու գրաւոր ուղերձ մատուց, մին յանուն Կայսեր և միւսն յանուն Օգոստափառ Սուլթանին, խնդրելով հասուցանել ինչպէս և ուր հարկըն է։ Բաց յայսմանէ Տեսուչն օրհնութեան կոնդակ մի եւս տուաւ հիւպատոսին ՚ի դիմաց միաբանութեան առ Կայսրն, որով կ'իմացնէին թէ՛ ամեն տարի պատարագ պիտի մատուցանեն Ս. Յարութեան գերեզմանին վրայ՝ Կայսեր զաւակին համար։ Վանուց տանիքը, որ Կայսեր շնորհիւ իրենց սեպհականութիւն եղած է, արձան մի կանգնած են, որուն վրայ դրոշմուած են նախ Օգոս. Սուլթանի և ապա Աւստրիոյ Կայսեր անունները։ Սիւրբանութեան սեղանատան մէջ եւս, ուր առաջին անգամ հիւպատոսի միջնորդութեամբ խօսք բացուած է Կայսեր հետ յիշեալ տանիքը առնելու համար, արձան մի կանգնած են և արձանագրութեան մէջ յիշած են նաև Հիւպատոսի անունը, որոյ շնորհիւ այս գործը կատարուած է։

—Ամսոյս 11ին քաղաքիս Պրանչիսկեան Ատին միաբանութիւնը մեծաւ հանդեսիւ կատարեց Պիոս ԹԴ Պապի կէս—Յօրեւեանը։ Բաց ՚ի ցերեկեան պատարագէն և Թափօրէն, որ Ս. Յարութեան տաճարի մէջ կատարուեցաւ, գիշերուան հանդէսը ըստ ամենայնի աշխարհային կերպարանք ունէր։ Ատին միաբանութեան սեպհական ամեն փանքերը և շէնքերը կը փայլէին ճրագաւառութեան լուսով, երկար ժամանակ հրախաղութիւններ կը կատարուէին և օգապարիկ գունտեր կ'արձակուէին, բայց ամենէն մեծ օգապարիկը, որուն վրայ Պիոս ԹԴ գրուած էր, սակաւ ինչ բարձրանալէն զինի՝ Ս. Յարութեան տաճարի գմբէթին ընդհարելով՝ բռնկեցաւ, խորին հեծութեան և յուսահատութեան մէջ համակելով Ատին հանդիսականները, որոնք սնոտիական նախապաշարմամբ վարժած են զանազան գուշակութիւններ հանել սոյնօրինակ պատահական դէպքերէն։

Այս հանդէսը խիստ մեծ նշանակութիւն ունէր Ատինաց համար, փան զի նոքա (որ Պետրոս Աւաքեսալը նախապապ կը համարեն և նորա պապութեան շրջանը 25 տարի և 2 ամիս կը քարոզեն) գարմացմամբ կը հրաշանային թէ ինչպէս Հռոմոյ Պապերուն մէջ Պիոս ԹԴը Պետրոսին չափ գահակալէլէն զինի՝ նաեւ այսուհետեւ պիտի անցանէ զանցանէ քան զՊետրոս։

Տակաւ ինքանիքանի դարեր պէտք են, որ քրիստոնէական ճշմարիտ լոյսը Թափանցէ Ատին կղերի ձեռքով խաւարած խեղճ ժողովրդոց սրտին մէջ։

ՅԼՆԿ

ՕԳՈՍՏՈՍ

Սամարացին .	169
Սուրբ Տեղեաց խնդիրը .	178
Ինն առ քրիստոսանուէր նորընծայս .	186
Համառօտ պատասխաններ .	188
Վամանակագրականք .	191

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԼՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամսէ ամիս կը հրատարակուի 24 երեսի բաղկացեալ մէկուկէս ութածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիյէ , հանդերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի :
- Գ. Չատ տետրակ առնել արդիւր , պէտք է ամեն մէկ տետրին շուրս դառն հեկան վճարէ :